



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

«ԴԱՐԵՍԿԻԶԲ» ՍՊԸ-Ն ԸՆԴԴԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(զանգատ թիվ 61737/08)

ՎՃԻՌ

Հոդված 15 • Պարտավորություններից շեղում արտակարգ դրության ժամանակ • Կառավարության կողմից համոզիչ ապացույցներ չներկայացնելն առ այն, որ 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած ընդդիմության ցույցերը «Բնակչության կյանքին սպառնացող» արտակարգ իրավիճակ է հանդիսացել • Պարտավորություններից շեղման պայմանները չեն ապահովվել

Հոդված 10 • Արտահայտվելու ազատություն • Տեղեկություններ տարածելու ազատություն • Հետընտրական զանգվածային բողոքի ակցիաների համատեքստում հայտարարված արտակարգ դրության արդյունքում ընդդիմադիր թերթի տպագրության անհիմն արգելք • Սահմանափակում, որը հանգեցնում է քաղաքական բանավեճը ձնշելուն եւ չհամընկնող կարծիքները լռեցնելուն • «Բնակչության կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակի» առկայությունը չէր կարող պատրվակ հանդիսանալ քաղաքական բանավեճի ազատությունը սահմանափակելու համար

Հոդված 6 (վարչական) • Դատարանի մատչելիությունը • Նախագահի հրամանագրի դեմ բերված բողոքը Վարչական դատարանի կողմից իրավագործության հիմքով չքննելու փաստը խաթարել է դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

21 սեպտեմբերի 2021թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

«ԴԱՐԵՍԿԻԶԲ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Յոնկո Գրոզեւ [Yonko Grozev]՝ *Նախագահ,*

Թիմ Այքը [Tim Eicke],

Ֆարիս Վեհաբովիչ [Faris Vehabović],

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking]՝ *դատավորներ,*

Աննա Մարգարյան՝ *ad hoc (ժամանակավոր) դատավոր,*

Էլ Իլզե Ֆրայվիրտ [Ilse Freiwirth]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն «Դարեսկիզբ» ՍՊԸ հայկական ընկերության (դիմումատու ընկերություն) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2008 թվականի դեկտեմբերի 16-ին Դատարան ներկայացված գանգատը,

Հայաստանի կառավարությանը (Կառավարություն) դատարանի մատչելիություն չապահովելու մասով, դիմումատու ընկերության՝ ենթադրաբար օրենքին հակասող բողոքը քննող դատարանի հետ կապված եւ դիմումատու ընկերության՝ տեղեկատվություն ստանալու եւ տարածելու իրավունքի ենթադրյալ խախտման մասով բողոքի վերաբերյալ ծանուցելու որոշումը,

Պատասխանող կառավարության կողմից ներկայացված դիտարկումները եւ դիմումատու ընկերության կողմից ի պատասխան ներկայացված դիտարկումները,

Լոնդոնում տեղակայված «Մեդիա Լիգըլ Դիֆենս» հասարակական

կազմակերպության կողմից ներկայացված մեկնաբանությունները, որին Բաժանմունքի նախագահի կողմից շնորհվել էր միջամտելու թույլտվություն,

Պալատի նախագահի որոշումը տիկին Աննա Մարգարյանին որպես *ad hoc* (ժամանակավոր) դատավոր նշանակելու մասին (Դատարանի կանոնների 29-րդ կանոն)՝ Հայաստանի կողմից ընտրված դատավոր Արմեն Հարությունյանի կողմից դատավարությանը մասնակցել չկարողանալու պատճառով (28-րդ կանոն),

2021 թվականի օգոստոսի 31-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն գործը վերաբերում է 2008 թվականի մարտի 1-ին Երեւանում 20-օրյա ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու արդյունքում դիմումատու ընկերության կողմից հրապարակվող թերթի տպագրության արգելքին, ներառյալ՝ Հայաստանի կողմից այդ մասով իր պարտավորություններից շեղումը (Կոնվենցիայի 10-րդ եւ 15-րդ հոդվածներ): Այն վերաբերում է նաեւ արտակարգ դրություն հայտարարելու մասին նախագահի հրամանագիրը բողոքարկելու նպատակով դիմումատու ընկերության համար դատարանի մատչելիությունը մերժելուն եւ դիմումատու ընկերության՝ դատարանի մատչելիությունը մերժելու մասին որոշման դեմ բողոքը քննող դատարանի ենթադրյալ ապօրինի կազմին (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատու ընկերությունը մասնավոր ընկերություն է, որը տվյալ ժամանակահատվածում հրապարակել է ընդդիմադիր «Հայկական Ժամանակ» օրաթերթը, եւ որի իրավաբանական հասցեն Երեւանում էր: Դիմումատու ընկերությանը ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Տ. Աթանեսյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական

դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետև՝ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերը, որոնք ներկայացրել են կողմերը, կարելի է ամփոփել հետևյալ կերպ:

I. ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. 2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանում տեղի են ունեցել նախագահական ընտրություններ: Հիմնական թեկնածուներն էին այդ ժամանակ վարչապետի պաշտոն զբաղեցնող պրն Սերժ Սարգսյանը, որը ներկայացնում էր իշխող կուսակցությունը, եւ հիմնական ընդդիմադիր թեկնածու պրն Լևոն Տեր-Պետրոսյանը:

6. Ընտրությունների նախնական արդյունքները հայտարարելուց անմիջապես հետո պրն Տեր-Պետրոսյանն իր համակիրներին կոչ է արել հավաքվել Երեւանի կենտրոնում գտնվող Ազատության հրապարակում՝ ընտրական գործընթացում ենթադրաբար տեղի ունեցած խախտումների դեմ իրենց բողոքն արտահայտելու նպատակով՝ հայտարարելով, որ ընտրություններն ազատ եւ արդար չեն եղել: 2008 թվականի փետրվարի 20-ից սկսած պրն Տեր-Պետրոսյանի համակիրներն ամեն օր անցկացնում էին համազգային բողոքի ցույցեր՝ իրենց հանդիպումների վայրը դարձնելով Ազատության հրապարակը եւ շրջակա այգին: Պարզվում է, որ Ազատության հրապարակում պարբերաբար ներգրավվել են տասնյակ հազարավոր մարդիկ, իսկ մի քանի հարյուր ցուցարարներ տեղադրել են վրաններ այդ վայրում եւ քսանչորս ժամ շարունակ մնացել են այնտեղ:

7. 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան՝ բողոքի ակցիաներից ինն օր հետո, Ազատության հրապարակում իրականացվել են ոստիկանական

գործողություններ, որի արդյունքում հրապարակն ազատվել է բոլոր ցուցարարներից եւ արգելափակվել: Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի [Mushegh Saghatelyan v. Armenia] գործով (թիվ 23086/08, § 248, 2018 թվականի սեպտեմբերի 20) դատարանը եզրակացրել է, որ դա արվել է ակնհայտորեն առանց ցրվելու մասին նախնական զգուշացումների եւ չհիմնավորված ու անհամաչափ ուժի գործադրմամբ:

8. Պարզվում է, որ Ազատության հրապարակը ցուցարարներից ազատելուց հետո նրանցից ոմանք տեղափոխվել են Ազատության հրապարակից ոչ ավելի, քան 2 կմ հեռավորության վրա գտնվող Ֆրանսիայի դեսպանատան, Երեւանի քաղաքապետարանի եւ Գրիգոր Լուսավորիչ փողոցում գտնվող Մյասնիկյանի հուշարձանի մոտակայքը, որտեղ մեծ տարածք կա: Նրանց ավելի ուշ միացել են հազարավոր այլ մարդիկ, որոնք դուրս էին եկել Երեւանի փողոցներ՝ ակնհայտորեն ի պատասխան վաղ առավոտյան տեղի ունեցած իրադարձությունների: Կեսօրին մոտ այդ հատվածում արդեն մարդկանց, այդ թվում՝ ոստիկանների մեծ կուտակում կար: Ընդդիմության բազմաթիվ առաջնորդներ եւս ներկա էին եւ պարբերաբար դիմում էին բազմությանը՝ օգտագործելով բարձրախոս: Լարվածությունը շարունակում էր աճել, եւ առանց այն էլ լարված իրավիճակն աստիճանաբար վատթարանում էր՝ վերածվելով ցուցարարների եւ իրավապահների միջեւ ավելի հաճախակի ու դաժան բախումների, որոնք հիմնականում տեղի էին ունենում վերոնշյալ տարածքին մոտ մի շարք փողոցներում, այդ թվում՝ Լեոյի փողոցում, Պարոնյան փողոցում եւ Մաշտոցի պողոտայում, որոնք բոլորը գտնվում են Մյասնիկյանի հուշարձանից մոտ 1 կմ հեռավորության վրա: Պարզվում է՝ ոստիկանության կողմից կիրառվել են ամբոխին զսպելու տարբեր միջոցներ, այդ թվում՝ լուսաձայնային նռնակներ, արցունքաբեր գազ եւ ռետինե փամփուշտներ, մինչդեռ որոշ ցուցարարներ կառուցել էին արգելապատնեշներ, այրել պետական եւ մասնավոր մեքենաներ եւ որպես զենք օգտագործել էին քարեր, երկաթե ձողեր, փայտե մահակներ, մոլոտովյան հեղուկ եւ նմանատիպ այլ առարկաներ: Արդյունքում զոհվել են տասը մարդ, այդ թվում՝ ութ խաղաղ բնակիչ, տասնյակ ցուցարարներ եւ ոստիկաններ

վիրավորվել էին, եւ զգալի վնաս էր հասցվել գույքին, ներառյալ՝ մոտակա մի շարք խանութների թալանը:

9. Դիմումատու ընկերությունը պնդել է, որ իշխանությունները, դաժանորեն ցրելով Ազատության հրապարակի հավաքը, իսկ այնուհետեւ Մյասնիկյանի հուշարձանի եւ հարակից փողոցների տարածքում դաժան վերաբերմունք ցուցաբերելով սեփական քաղաքացիների նկատմամբ, նպատակ են ունեցել ճնշել ժողովրդական բողոքի շարժումը՝ գիտակցելով, որ դա կարող է հանգեցնել ժողովրդավարական փոփոխությունների եւ ստիպել նրանց կորցնել իրենց իշխանությունը:

10. Կառավարությունը հիմնականում անդրադարձել է համապատասխան իրադարձությունների նկարագրությանն այնպես, ինչպես դա ներկայացվել է մի շարք պաշտոնական փաստաթղթերում (տե՛ս ստորեւ 43-րդ եւ 46-րդ պարբերությունները)՝ պնդելով, որ ցուցարարներն ապօրինի զենք էին կրում եւ առաջինն են հարձակվել ոստիկանության վրա: Նրանք պնդում էին, որ իրավիճակը Երեւանում հասել էր զանգվածային անկարգությունների, որը հնարավոր է եղել ճնշել միայն արտակարգ դրություն հայտարարելու միջոցով (տե՛ս ստորեւ 11-րդ պարբերությունը):

II. ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ ԵՎ ԴԻՄՈՒՄԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼԵԼԸ

11. 2008 թվականի մարտի 1-ին մոտավորապես ժամը 10:30-ին Հայաստանի գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը հրամանագիր է ընդունել՝ Երեւան քաղաքում հայտարարելով արտակարգ դրություն: Հրամանագիրը, *inter alia* (*ի թիվս այլնի*), շարադրված էր հետեւյալ կերպ.

«Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգին սպառնացող վտանգը կանխելու եւ բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ եւ

117-րդ հոդվածի 6-րդ կետերով՝ որոշում եմ.

1. Երեւան քաղաքում 2008 թվականի մարտի 1-ից 20 օր ժամկետով հայտարարել արտակարգ դրություն:

...

4. Սահմանել արտակարգ դրություն հայտարարված տարածքում հետեւյալ ժամանակավոր սահմանափակումները.

...

4) արգելվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ ակնհայտ սուտ կամ իրավիճակն ապակայունացնող տեղեկատվություն կամ առանց իրազեկման (ապօրինի) միջոցառումների մասնակցության կոչեր, ինչպես նաեւ նման տեղեկատվություն կամ կոչեր որեւէ այլ եղանակով եւ ձեւով հրապարակելը կամ տարածելը.

...

5. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում տեղեկացման պահից»:

12. Պարզվում է, որ անկարգությունները Երեւանի փողոցներում դադարել են 2008 թվականի մարտի 2-ի վաղ առավոտյան:

13. 2008 թվականի մարտի 3-ի լույս 4-ի գիշերը դիմումատու ընկերությունը տպարան է ներկայացրել իր թերթի հերթական համարի նախանմուշը: Ազգային անվտանգության աշխատակիցները, որոնք տպարանում են եղել, կարդացել են թերթի նախանմուշը եւ առանց հիմնավորման արգելել են դրա տպագրումը:

14. Դիմումատու ընկերության կողմից թերթը հրապարակելու հետագա փորձեր չեն արվել մինչեւ 2008 թվականի մարտի 13-ին Հայաստանի նախագահի կողմից մեկ այլ հրամանագրի ընդունումը, որով փոփոխություններ էր արվում 2008 թվականի մարտի 1-ի հրամանագրում: Այդ հրամանագրի համապատասխան մասերը շարադրվել են հետեւյալ կերպ.

«Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ եւ 117-րդ հոդվածի 6-րդ կետերով՝ որոշում եմ.

...

1) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) արգելվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ ակնհայտ սուտ կամ իրավիճակն ապակայունացնող տեղեկատվություն կամ առանց իրազեկման (ապօրինի) միջոցառումների մասնակցության կոչեր, ինչպես նաեւ նման տեղեկատվություն կամ կոչեր որեւէ այլ եղանակով եւ ձեւով հրապարակելը կամ տարածելը.

...

Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում 2008 թվականի մարտի 14-ից»:

15. 2008 թվականի մարտի 13-ի լույս 14-ի գիշերը դիմումատու ընկերությունը, պարզելով 2008 թվականի մարտի 1-ի հրամանագրում արված փոփոխությունների մասին, նորից է թերթի հերթական համարի նախանմուշը ներկայացրել տպարան: Սակայն Ազգային անվտանգության աշխատակիցները, ինչպես նախորդ դեպքում, կարդացել են թերթի ամբողջ նախանմուշը եւ առանց հիմնավորման արգելել են դրա տպագրումը:

16. 2008 թվականի մարտի 20-ի կեսգիշերին նախագահի հրամանագիրը դադարել է օրինական ուժի մեջ լինել, եւ արտակարգ դրությունը դադարեցվել է:

17. 2008 թվականի մարտի 21-ին դիմումատու ընկերությունը վերսկսել է իր թերթի հրապարակումը:

18. 2008 թվականի ապրիլի 17-ին դիմումատու ընկերությունը դիմել է Վարչական դատարան՝ բողոք ներկայացնելով Ազգային անվտանգության աշխատակիցների դեմ, որոնք թույլ չեն տվել տպագրել իր թերթի համարները: Բացի այդ, այն ներկայացրել է նախագահի 2008 թվականի մարտի 1-ի հրամանագրի 4-րդ կետի 4-րդ ենթակետն անվավեր ճանաչելու պահանջ, որը, եւ՝ նախքան դրանում արված փոփոխությունները, եւ՝ այդ փոփոխություններից հետո տարբերակներով (տե՛ս վերելում 11-րդ եւ 14-րդ պարբերությունները) հիմք է ծառայել տպագրությունը խոչընդոտելու համար, եւ դրանով խախտվել են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող մի շարք օրենքներ: Դիմումատու ընկերությունը պնդել է, մասնավորապես, որ իր նկատմամբ կիրառված

սահմանափակումներով խախտվել են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ եւ 68-րդ հոդվածների եւ «Զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքի 2-րդ եւ 4-րդ հոդվածների պահանջները (տե՛ս ստորել 39-42-րդ պարբերությունները): Այն պնդել է, *inter alia*, որ չի եղել որեւէ ներպետական նորմատիվ դրույթ, համաձայն որի նախագահն արտակարգ դրություն հայտարարելու իրավասություն կունենար: Դիմումատու ընկերությունն ի վերջո պնդել է, որ տպագրությունը խոչընդոտելու հետեւանքով թերթի վաճառք չունենալու պատճառով ինքը նյութական վնաս է կրել:

19. 2008 թվականի մայիսի 6-ին Վարչական դատարանը մերժել է դիմումատու ընկերության բողոքը՝ իրավագործության բացակայության հիմքով: Վարչական դատարանը, հղում կատարելով Սահմանադրության 43-րդ, 44-րդ հոդվածներին, 55-րդ հոդվածի 14-րդ կետին, 100-րդ հոդվածի 1-ին կետին եւ 117-րդ հոդվածի 6-րդ կետին (տե՛ս ստորել 29-31-րդ, 34-րդ եւ 33-րդ պարբերությունները), նշել է, որ, պայմանավորված այն հանգամանքով, որ Հայաստանի կողմից դեռեւս ընդունված չի եղել արտակարգ դրության իրավական ռեժիմը կարգավորող որեւէ կարգավորում, Հայաստանի նախագահն արտակարգ դրություն է հայտարարել՝ հիմնվելով Սահմանադրությամբ իրեն ուղղակիորեն վերապահված լիազորության վրա: Հետեւաբար նախագահի 2008 թվականի մարտի 1-ի հրամանագրի օրինականությունը հնարավոր էր ստուգել միայն Սահմանադրության մակարդակով, քանի որ չի եղել հրամանագիրը կանոնակարգող որեւէ կարգավորում: Հետեւաբար դիմումատու ընկերությունն իր բողոքով ըստ էության վիճարկում էր նախագահի հրամանագրի սահմանադրականությունը, որը, Վարչական դատարանության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն (տե՛ս ստորել 36-րդ պարբերությունը), դուրս է մնում Վարչական դատարանի իրավագործության շրջանակից եւ գտնվում է Սահմանադրական դատարանի բացառիկ իրավագործության ներքո:

20. 2008 թվականի մայիսի 12-ին դիմումատու ընկերությունը բողոք է ներկայացրել՝ պնդելով, *inter alia*, որ 2008 թվականի մայիսի 6-ի որոշմամբ խախտվել է Սահմանադրության 6-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության իր իրավունքը: Այն դեպքերում, երբ նախագահի հրամանագրերը,

բացի Սահմանադրությունից, անհամատեղելի էին ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող օրենքների հետ, այդ հրամանագրերով խախտված իրավունքների պաշտպանության պարտավորությունը դրված էր Վարչական դատարանի վրա: Հրամանագիրը պետք է համապատասխաներ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող որեւէ օրենքի, այլ ոչ միայն արտակարգ դրության իրավական ռեժիմը կարգավորող կոնկրետ օրենքին, որը, ավելին, գոյություն չուներ: Հետեւաբար հրամանագիրը ենթակա էր դատական կարգով ուսումնասիրման, նույնիսկ այդպիսի օրենքի բացակայության դեպքում: Դիմումատու ընկերության գործը դեպի Սահմանադրական դատարան շեղելու փորձով լիովին անտեսվել է այն փաստը, որ գործի հանգամանքներից ելնելով՝ այն, Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, իրավունք չուներ դիմելու այդ դատարան (տես ստորեւ 35-րդ պարբերության վերջը):

21. 2008 թվականի մայիսի 19-ին Վարչական դատարանը՝ հինգ դատավորի կազմով, մերժել է դիմումատու ընկերության դիմումը եւ վերահաստատել է 2008 թվականի մայիսի 6-ի որոշման մեջ ներկայացված հիմնավորումը:

22. Դիմումատու ընկերությունը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ ներկայացնելով համանման փաստարկներ: Այն նաեւ բողոք է ներկայացրել առ այն, որ Վարչական դատարանի կազմն անօրինական է եղել, քանի որ այն քննել է իր բողոքը հինգ դատավորի, այլ ոչ թե երեք դատավորի կազմով, ինչպես որ պահանջվել է օրենքով:

23. 2008 թվականի հունիսի 20-ին Վճռաբեկ դատարանը վերադարձրել է դիմումատու ընկերության բողոքը համապատասխան հիմքերի բացակայության պատճառով:

24. 2008 թվականի հոկտեմբերի 6-ին դիմումատու ընկերությունը դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան՝ պահանջելով նախագահի 2008 թվականի մարտի 1-ի հրամանագրի 4-րդ կետի 4-րդ ենթակետը ճանաչել որպես Սահմանադրության 27-րդ, 44-րդ հոդվածների, 55-րդ հոդվածի 14-րդ եւ 117-րդ հոդվածի 6-րդ կետերին չհամապատասխանող (տե՛ս ստորեւ 28-րդ, 30-րդ, 31-

րդ եւ 33-րդ պարբերությունները): Դիմումատու ընկերությունը հայտնել է, որ ֆորմալ տեսանկյունից իր դիմումը չէր համապատասխանում Սահմանադրական դատարան ներկայացվող առանձին դիմումների նկատմամբ կիրառելի համապատասխանության չափանիշներին, այդ պատճառով այն առաջինը ներկայացվել է Վարչական դատարան: Այնուամենայնիվ, նշված դատարանը պատճառաբանել էր, որ վիճարկվող հարցը ենթական էր քննության միայն Սահմանադրական դատարանի կողմից:

25. 2008 թվականի հոկտեմբերի 8-ին Սահմանադրական դատարանն առանց քննելու վերադարձրել է դիմումատու ընկերության դիմումն այն հիմքով, որ դիմումատու ընկերությունը, *inter alia*, Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, իրավունք չուներ դիմելու Սահմանադրական դատարան (տե՛ս ստորել 35-րդ պարբերության վերջում):

26. Դիմումատու ընկերությունն այս առնչությամբ բողոք է ներկայացրել Սահմանադրական դատարանի նախագահին՝ խնդրելով քննության առնել իր դիմումը:

27. 2008 թվականի հոկտեմբերի 30-ին Սահմանադրական դատարանը քննել է բողոքը եւ մերժել դիմումատու ընկերության դիմումը՝ պատճառաբանելով, որ, Սահմանադրության 101-րդ հոդվածի համաձայն, Սահմանադրության հետ նախագահի հրամանագրերի համատեղելիությանը վերաբերող դիմումներ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք են միայն Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը, Կառավարությունը, դատարանները, գլխավոր դատախազը եւ Մարդու իրավունքների պաշտպանը: 101-րդ հոդվածի 6-րդ կետով առանձին դիմումներ կարող են ներկայացվել, միայն եթե վիճարկվում է օրենքի դրույթի սահմանադրականությունը: Հետեւաբար դիմումատու ընկերությունն իրավունք չուներ վիճարկելու նախագահի հրամանագրի սահմանադրականությունը:

I. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ

Ա. 1995 թվականի Սահմանադրությունը (2005 թվականի նոյեմբերի 27-ին արված փոփոխություններից հետո)

1. Ազատ արտահայտման իրավունքը

28. Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

29. 43-րդ հոդվածով նախատեսվում է, որ, *inter alia*, մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:

2. Արտակարգ դրությունը

30. 44-րդ հոդվածով նախատեսվում է, որ մարդու եւ քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 եւ 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ Հայաստանի կողմից ստանձնած միջազգային

պարտավորությունների շրջանակներում:

31. 55-րդ հոդվածի 14-րդ կետով նախատեսվում է, որ Հայաստանի նախագահը, սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ: Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով:

32. 56-րդ հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի նախագահը հրապարակում է հրամանագրեր, որոնք չեն կարող հակասել Սահմանադրությանը եւ օրենքներին:

33. 117-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսվում է, որ մինչեւ արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումը օրենքով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում Հայաստանի նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ:

3. Սահմանադրական դատարանի իրավագործությունը

34. 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվում է, որ Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով որոշում է, *inter alia*, Հայաստանի նախագահի հրամանագրերի համապատասխանությունը Սահմանադրությանը:

35. 101-րդ հոդվածում թվարկվում են այն անձինք, որոնք կարող են դիմել Սահմանադրական դատարան: 1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ եւ 8-րդ պարբերությունների համաձայն՝ Սահմանադրության հետ Հայաստանի նախագահի հրամանագրերի համատեղելիությանը վերաբերող դիմումները կարող են ներկայացվել Սահմանադրական դատարան Հայաստանի նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի, Կառավարության, դատարանների, գլխավոր դատախազի եւ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից: Այլ կերպ՝ 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք՝

կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, կարող է դիմել Սահմանադրական դատարան:

Բ. Վարչական դատավարության օրենսգիրքը (2008-2014թթ.)

1. Վարչական դատարանի իրավագործությունը

36. Վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է, որ Վարչական դատարանին ընդդատյա են, *inter alia*, Հայաստանի նախագահի նորմատիվ բնույթ ունեցող ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

2. Վարչական դատարանի կազմը վերաքննիչ վարույթում

37. 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ Վարչական դատարանի՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ բերված բողոքները Վարչական դատարանում քննվում են կոլեգիալ՝ 3 դատավորի կազմով:

38. 125-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսվում է, որ Վարչական դատարանը 3 դատավորի կազմով քննում է Վարչական դատարանի կայացրած՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումների դեմ ներկայացված բողոքները:

Գ. «Իրավական ակտերի մասին» օրենք (2002-2018)

39. «Իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով

նախատեսվում է, որ Հայաստանի նախագահը կարող է հրապարակել հրամանագրեր եւ կարգադրություններ Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում:

40. 68-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք ազատ է կատարել այն, ինչ արգելված չէ օրենքով, եթե դրա հետեւանքով չեն խախտվի այլոց իրավունքները, ազատությունները, պատիվն ու բարի համբավը: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Պարտականությունների կատարման կարգը, պայմանները եւ ծավալը որոշում են օրենքով:

Դ. «Զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենք (2004)

41. «Զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքի 2-րդ հոդվածով նախատեսվում է, որ զանգվածային լրատվության ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, Քաղաքացիական օրենսգրքով, «Զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաեւ այդ հարաբերությունները կարգավորող իրավական այլ ակտերով:

42. 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով արգելվում է գրաքննությունը եւ որեւէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ:

Ե. Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի Ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը 2008 թվականի մարտի 1-2-ը Երեւան քաղաքում տեղի ունեցած դեպքերի հետաքննության եւ դրանց պատճառների մասին:

43. 2008 թվականի հունիսի 16-ին Հայաստանի Ազգային ժողովում ստեղծվել է Ժամանակավոր հանձնաժողով՝ հետաքննելու 2008 թվականի մարտի 1-2-ը

Երեւանում տեղի ունեցած իրադարձությունները եւ այն հանգամանքները, որոնք հանգեցրել են դրանց: 2009 թվականի սեպտեմբերի 17-ին ժամանակավոր հանձնաժողովը հրապարակել է իր եզրակացությունը՝ 128 էջից բաղկացած մի փաստաթուղթ, որը պարունակում էր նաեւ արտակարգ դրություն հայտարարելուն վերաբերող համառոտ գլուխ, որի համապատասխան հատվածները շարադրված են ստորեւ՝

«6.1 «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» հրամանագրի ընդունման հանգամանքների ուսումնասիրությունը

...

Սահմանադրության 55-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն... արտակարգ դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվել է Ազգային ժողովի հատուկ նիստ: ...

Նիստում եղել են բազմաթիվ ելույթներ, որոնցում խիստ մտահոգություններ են հնչել ստեղծված իրավիճակի կապակցությամբ:

Ազգային ժողովի պատգամավորները նախագահի հրամանագիրը գնահատել են... որպես պարտադրված, բայց նաեւ անհրաժեշտ քայլ եւ միակ ելքը ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Նրանց խոսքով՝ վտանգված է Հայաստանի կայունությունը եւ միջազգային հեղինակությունը, եւ յուրաքանչյուրն իր կողմից պետք է անի առավելագույնը՝ հանգուցալուծելու ստեղծված աննախադեպ իրավիճակը:

...

6.2 Կոմիտեի եզրահանգումները

Հանձնաժողովը գտնում է, որ յուրաքանչյուր երկրի պատմության ընթացքում լինում են պահեր, որոնք կասեցնում են երկրի զարգացման ընթացքը, ինչպիսիք, ցավոք սրտի, մենք ունեցել ենք: Անկախ նրանից, թե մենք ինչ հանգուցալուծման կիանգենք, միեւնույնն է, արդեն փաստը մնում է փաստ, որ հասարակության մի մասի մոտ ծագել է փոխադարձ ատելություն եւ թշնամանք: Դրա համար էլ «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» նախագահի հրամանագիրը ոչ թե իրավիճակի լուծում էր, այլ պարտադրված, բայց նաեւ անհրաժեշտ քայլ եւ միակ ելքը ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Ուշացնել այդ միջոցառումը կնշանակեր թույլ տալ, որ մեր ժողովրդի մի որոշակի մաս մի խումբ անձանց կողմից հրահրված ապօրինությունները շարունակել մեր երկրում, մասնավորապես՝ Երեւան քաղաքում:

Նկատի ունենալով, որ հատկապես [մարտի 1-ի] կեսօրից [Երեւանի քաղաքապետարանի] շրջակայքում հավաքված բազմությունն աստիճանաբար

անվերահսկելի է դարձել, եւ երեկոյան նրանց գործողութիւնները վերջնականապէս վերածվել են ջարդարարության ու թալանի. նրանք հրկիզել ու ջարդուփշուր են արել շուրջ 100 անձնական օգտագործման, ոստիկանության, ինչպէս նաեւ շտապ օգնության ավտոմեքենաներ, ավտոբուսներ ու տրուլեյբուսներ, ավերել ու թալանել են «Մոսկվայի տունը», շրջակա խանութներն ու գրասենյակները, փշրել են [քաղաքապետարանի] եւ «Վիվասելի» վարչական շէնքերի ապակիները, ցուցարարները հարձակումներ են գործել ոստիկանության զորքերի ծառայողների եւ ոստիկանության աշխատակիցների վրա: Արտակարգ դրություն մտցնելն անհրաժեշտություն էր:

Հանձնաժողովը միաժամանակ գտնում է, որ եթէ «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիրը հայտարարվեր ավելի վաղ, երբ տեղի են ունեցել առաջին պայթյունները, կրակոցներն ու մահվան դեպքերը, զուցէ հնարավոր լինէր խուսափել նման ծանր հետեւանքներից:

Զ. Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմեն) հատուկ զեկույցը 2008 թվականի փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների եւ հետընտրական զարգացումների վերաբերյալ

44. Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն իրականացրել է Հայաստանում տեղի ունեցած հետընտրական իրադարձությունների համապարփակ եւ խորը վերլուծություն, որի համապատասխան հատվածները նշված են *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* [*Mushegh Saghatelyan v. Armenia*] (վերետում հիշատակված՝ § 124) եւ *Մյասնիկ Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* [*Myasnik Malkhasyan v. Armenia*] (թիվ 49020/08, § 49, 2020 թվականի հոկտեմբերի 15) գործերում: Զեկույցի մի շարք համապատասխան հատվածներ, որոնք չեն նշվել այդ վճիռներում, շարադրված են հետեւյալ կերպ.

«3.2.3. Արտակարգ դրության ռեժիմ

[Մարտի 1-ին] արտակարգ դրություն մտցնելու մասին հրամանագիր ստորագրելու առնչությամբ տրված ասուլիսի ժամանակ [ՀՀ] նախագահ Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ այն ուղղված է ՀՀ սահմանադրական կարգի պահպանությանը եւ, [առաջին հերթին], ՀՀ բնակչության անվտանգության ապահովմանը: Հրամանագիրը ստորագրվել է այն ժամանակ, երբ ՀՀ նախագահին զեկույցել են ութ վիրավորների մասին: Ստեղծված պայմաններում արտակարգ իրավիճակի հայտարարումն անհրաժեշտ էր:

ՀՀ Սահմանադրության [55-րդ հոդվածի համաձայն]՝ արտակարգ դրություն հայտարարում է ՀՀ նախագահը: Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով: [Հատկանշական է, որ] ՀՀ-ում դեռեւս ընդունված չէ արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենք, որը կսահմաներ այն բոլոր իրավունքները, որոնք ենթակա են սահմանափակման, սահմանափակումների ծավալները, դրանց նկատմամբ հսկողություն իրականացնելու մեխանիզմները եւ այլն: Նման իրավիճակում արտակարգ դրություն հայտարարելիս գործնականում ծագեցին հետեւյալ հիմնախնդիրները.

1. [ՀՀ] Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ «մարդու եւ քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ... կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ»: Թեեւ [ՀՀ] Սահմանադրության 117-րդ հոդվածի 6-րդ կետը մինչեւ օրենքով արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում [ՀՀ] նախագահին թույլ է տալիս իրականացնել իրավիճակից

բխող միջոցառումներ, արտակարգ դրության իրավական ռեժիմ սահմանող օրենքի բացակայությամբ իրավունքների սահմանափակումը նորանոր վիճաբանությունների տեղիք տվեց:

2. Հրամանագրի կիրառումը գործնականում ուղեկցվեց մի շարք խախտումներով.

...

- Հրամանագրի 4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ զանգվածային լրատվության միջոցների պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում: [Մարդու իրավունքների] պաշտպանի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Ա1+» եւ «Լրագիր» լրատվական ինտերնետային կայքերի գործունեությունը դադարեցվել էր, եւ
- Չնայած Հրամանագրով մտցված սահմանափակումները գրաքննություն չէին նախատեսում, [գրաքննությունն արգելված է նաեւ «Զանգվածային լրատվության մասին» [ՀՀ] օրենքի 4-րդ հոդվածով], այդ օրերին փաստացի կիրառվում էր գրաքննություն: Դրա հետեւանքով որոշ համերկրային թերթերի տպագրությունն արգելվել էր նյութերի բովանդակության պատճառով: Մի շարք հրատարակություններ, ելնելով Հրամանագրով սահմանված ռեժիմից, հրաժարվեցին աշխատելուց, որովհետեւ հնարավորություններ չունեին ներկայացնելու ընդդիմադիր եւ քննադատական տեսակետներ, այն դեպքում, երբ ընդդիմությանը վարկաբեկող եւ վիրավորող, հաճախ ագրեսիվ արտահայտությունների հրապարակումն այլ թերթերում եւ հեռուստաալիքներով որեւէ կերպ չէր սահմանափակվում: ...»:

II. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԾԱՆՈԹՅՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՐՎԱԾ ՀԵՏԱԳԱ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Հայաստանի արտաքին գործերի նախարարության կողմից 2008 թվականի մարտի 2-ին ներկայացված, Հայաստանի մշտական ներկայացուցչության կողմից փոխանցված եւ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարության կողմից 2008 թվականի մարտի 4-ին գրանցված վերբալ հայտագրում ներառված պարտավորություններից շեղումը

45. 2008 թվականի մարտի 2-ի՝ պարտավորություններից շեղումների վերաբերյալ տեքստը շարադրված է հետևյալ կերպ.

«Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր հարգանքն է հավաստում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Ն.Գ. պարոն Թերրի Դելիսին եւ Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (ԵՊՇ թիվ 5) 15-րդ հոդվածի համաձայն՝ պատիվ ունի սույնով փոխանցելու Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Երեւանում արտակարգ դրություն հայտարարելու մասին»:

«Արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիր (Թիվ ՆՀ-35-Ն)

2008 թվականի մարտի 1

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգին սպառնացող վտանգը կանխելու եւ բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ եւ 117-րդ հոդվածի 6-րդ կետերով՝ որոշում եմ.

1. Երեւան քաղաքում 2008 թվականի մարտի 1-ից 20 օր ժամկետով հայտարարել արտակարգ դրություն:

2. Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացման եւ այլ հրատապ հարցերի կանոնակարգման եւ իրականացման ղեկավարումը վերապահել Հայաստանի Հանրապետության նախագահին:

3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովումը վերապահել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

4. Սահմանել արտակարգ դրություն հայտարարված տարածքում հետեւյալ ժամանակավոր սահմանափակումները՝

1) ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի եւ այլ զանգվածային միջոցառումների իրականացման արգելում.

2) գործադուլների եւ կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելում.

3) իրավապահ մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, անձանց, տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում եւ զննության իրականացում.

4) զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում.

5) առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության՝ թռուցիկների եւ այլ ձեռով քաղաքական քարոզչության իրականացման արգելում.

6) արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների եւ այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցում.

7) արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած եւ տվյալ տարածքում չբնակվող անձանց վտարում՝ նրանց միջոցների հաշվին, իսկ միջոցներ չլինելու դեպքում՝ պետական միջոցների հաշվին՝ կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ սույն հրամանագրի իրականացումն ապահովելու ուղղությամբ:

6. Հրամանագիրն ուժի մեջ է մտնում տեղեկացման պահից»:

Բ. Հայաստանի արտաքին գործերի նախարարության կողմից 2008 թվականի մարտի 6-ին ներկայացված, Հայաստանի մշտական ներկայացուցչի կողմից փոխանցված եւ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարության կողմից 2008 թվականի մարտի 6-ին գրանցված վերբալ հայտագրում ներառված հայտարարությունը

46. 2008 թվականի մարտի 6-ի հռչակագրի տեքստը շարադրված է հետևյալ կերպ.

«Հայաստանի Հանրապետության [(ՀՀ)] արտաքին գործերի նախարարությունն իր հարգանքն է հավաստում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին եւ, ի լրումն 2008 թվականի մարտի 2-ի թիվ 14/02627 [գրության], պատիվ ունի տեղեկացնելու նրան, որ Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի կողմ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի եւ 117-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի 2008 թվականի մարտի 1-ի հրամանագրի առնչությամբ եւ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, իրեն իրավունք է վերապահում շեղվելու հետևյալ դրույթները կիրառելու պարտավորություններից կամ սահմանափակելու դրանք. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետ, 10-րդ հոդվածի 1-ին կետ, 11-րդ հոդվածի 1-ին կետ եւ Կոնվենցիայի թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին կետ:

Հաշվի առնելով 2008 թվականի մարտի 1-ին Երեւանում տեղի ունեցած զանգվածային անկարգությունները, անձին հասցված վնասը եւ զգալի նյութական վնասը՝ վերոնշյալ հրամանագրով 20-օրյա ժամկետով երկարաձգվում է արտակարգ դրությունը Երեւան քաղաքում՝ կանխելու Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող վտանգը եւ պաշտպանելու բնակչության իրավունքներն ու օրինական շահերը:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը խնդրում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին տեղեկացնել Կողմ պետություններին այս շեղման մասին:

Մարտի 1-2-ի իրադարձությունները. Նկարագրություն

Նախագահական ընտրություններից հետո՝ փետրվարի 20-ին, [Լ. Տեր-Պետրոսյանը] եւ նրա թիմը նստացույց են սկսել Օպերայի հրապարակում եւ առանց լիազոր մարմնի հետ խորհրդակցելու իրականացրել են ամենօրյա (ապօրինի) հավաքներ եւ երթեր՝ նպատակ ունենալով ապակայունացնել իրավիճակը մայրաքաղաքում: Միեւնույն ժամանակ քաղաքական դեկլարությունը բազմիցս հայտարարել է, որ հանրահավաքների դեմ որեւէ առարկություն չունի եւ [Լ. Տեր-Պետրոսյանի] եւ նրա համակիրների կողմից ծանուցվելու դեպքում ողջամիտ ժամանակ եւ վայր կհատկացնի: [Լ. Տեր-Պետրոսյանը] խուսափել է նման ծանուցումից՝ ամբոխի գործողությունների համար պատասխանատվություն չկրելու համար:

Հանրահավաքին հնչել են հրահրող հայտարարություններ եւ կոչեր: Չնայած այդ գործողությունների անօրինական լինելու վերաբերյալ ոստիկանության բազմաթիվ զգուշացումներին՝ նրանք շարունակել են կոպտորեն խախտել հասարակական կարգը եւ վտանգել հասարակական անվտանգությունը: Օպերայի հրապարակում վրաններ են տեղադրվել, ողջ գիշեր հնչել է բարձր երաժշտություն, ցուցարարները բարձրախոսներով երգել են, պարել՝ խախտելով հրապարակին հարակից տարածքների անդորրը: Բացի այդ, ցուցարարները շրջակայքում ստեղծել են հակասանիտարական վիճակ:

Փետրվարի վերջին [Լ. Տեր-Պետրոսյանի] ակտիվ կողմնակիցներից ոմանց խուզարկության արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ զենքեր եւ զինամթերք. այս մասին լուսաբանվել է զանգվածային լրատվության միջոցներով, որին հաջորդել են ձերբակալությունները, կազմվել են առգրավման արձանագրություններ:

Դեռեւս փետրվարի 26-ին վարչապետ եւ նորընտիր նախագահ [Սերժ Սարգսյանը] բոլոր քաղաքական ուժերին համագործակցության, այդ թվում՝ կռաւիցիոն կառավարություն ստեղծելու առաջարկ էր արել: Փետրվարի 29-ին [Ս. Սարգսյանը] եւ նախագահի նախկին թեկնածու [Արթուր Բաղդասարյանը] ստորագրել են կռաւիցիոն համագործակցության համաձայնագիր, ինչի արդյունքում [Լ. Տեր-Պետրոսյանն] ու իր թիմը հասկացել են, որ իրենց սատարող այլ քաղաքական ուժեր չկան, եւ փորձել են երկրում իրավիճակն ապակայունացնել:

Փետրվարի վերջին ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում օպերատիվ տեղեկություններ են ստացվել որոշ միջոցառումներ կազմակերպելու նպատակով ցուցարարներին հրազեն, պայթուցիկ նյութեր, երկաթե ձողեր եւ մահակներ բաժանելու մասին: Օպերատիվ տվյալներ են ստացվել մարտի 1-ին մայրաքաղաքում կազմակերպվելիք սադրանքների եւ զանգվածային անկարգությունների մասին: Նույնպիսի օպերատիվ տվյալներ են ստացվել նաեւ Ազգային անվտանգության ծառայությունում: Հաշվի առնելով, որ

մինչ այդ հայտնաբերվել էին զենքեր եւ զինամթերք, այս տեղեկատվությունն էլ ավելի զգոնացնող էր: Այս օպերատիվ տվյալների մասին զեկուցվել է ՀՀ նախագահին: Իրավիճակը վերլուծելուց հետո ՀՀ նախագահը հանձնարարել է օրենքով սահմանված կարգով օպերատիվ տվյալներին համարժեք միջոցներ ձեռնարկել, ստուգել օպերատիվ տվյալները, առգրավել նյութերը եւ իրավիճակը լիցքաթափել:

2008 թվականի մարտի 1-ին՝ առավոտյան ժամը 7:00-ի սահմաններում, անգեն ոստիկանական ուժեր՝ առանց վահանների եւ սաղավարտների, մոտեցել են ցուցարարներին՝ խուզարկության միջոցով օպերատիվ տվյալները ճշտելու եւ վտանգը չեզոքացնելու նպատակով, եւ կոչ են արել նրանց թույլ տալ, որ ոստիկանությունը խուզարկությունը իրականացնի: Այդ պահին ոստիկանները նկատել են, որ ցուցարարներն այդտեղ եղած նստարաններով եւ այլ իրերով արգելապատնեշներ են կառուցել: Այդ ժամանակ Օպերայի հրապարակում հանրահավաք չի եղել. այնտեղ մոտ 900 մարդ է եղել: Ոստիկաններն այդ պահին մտադիր չեն եղել ակցիայի մասնակիցներին հեռացնել հրապարակից:

Խուզարկություն կատարելու պահանջին անսպասելիորեն հաջորդել է նստացույցի մասնակիցների հարձակումը ոստիկանների վրա: Ցուցարարներն սկսել են քարեր, փայտի կտորներ, երկաթյա ձողեր, դյուրավառ հեղուկով շշեր եւ այլ իրեր նետել: Իշխանությանը տապալելու կոչեր են արվել, եւ վիրավորվել է ոստիկանների արժանապատվությունը: Օգտագործվել են նաեւ երկաթյա ձողերից պատրաստված «ոզնիներ» եւ այլ իրեր: ՀՀ ոստիկանապետը, ելնելով իրավախախտումների անկանխատեսելիությունից եւ բնույթից, որոշել է օրենքով սահմանված կարգով աջակցել անպաշտպան ոստիկաններին եւ Օպերայի շրջակայքում տեղակայել ռետինե մահակներով, վահաններով եւ սաղավարտներով զինված ոստիկանության զորքեր՝ խռովարարների կողմից իրավախախտումները կանխելու նպատակով:

Ելնելով իրավախախտումների անկանխատեսելիությունից եւ բնույթից՝ որոշում է կայացվել օրենքով սահմանված կարգով ձեռնարկել համապատասխան միջոցներ: Իրավախախտներն սկսել են մահակներով, սուր կտրող եւ ծակող գործիքներով եւ մետաղյա ձողերով դիմադրություն ցույց տալ: Բախումների արդյունքում ոստիկանները վիրավորումներ են ստացել եւ տեղափոխվել հիվանդանոց: Ոստիկանները կատարել են իրենց պարտականությունները՝ կիրառելով միայն ռետինե մահակներ: Ակցիայի ընթացքում այլ հատուկ միջոցներ չեն օգտագործվել: Արդյունքում ակցիայի մասնակիցները հարկադրաբար հեռացվել են հրապարակից, իրականացվել է խուզարկություն, որով հաստատվել են զենքերի եւ զինամթերքի մասին ստացված օպերատիվ տվյալները: Հայտնաբերվել են նաեւ պայթուցիկ նյութեր, դյուրավառ հեղուկով շշեր, երկաթյա ձողեր, փայտե մահակներ եւ երկաթյա «ոզնիներ»:

Խառնաշփոթի որոշ կազմակերպիչներ եւ մասնակիցներ բերման են ենթարկվել

նստիկանական բաժանմունքներ, մյուսները փախել են եւ հավաքվել Երեւանի քաղաքապետարանի եւ Ֆրանսիայի դեսպանատան տարածքում: Ազգային ժողովի պատգամավորները, Մարդու իրավունքների պաշտպանը եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները հանդիպել են ցուցարարների կազմակերպիչներին, մասնավորապես՝ [Դ. Շահնագարյանին]: Նրանք կազմակերպիչներին եւ ցուցարարներին առաջարկել են հավաքն անցկացնել «Դինամո» մարզադաշտում, այնուհետեւ Երկաթուղային կայարանի հրապարակում: Առաջարկվել են եւս մի քանի այլ վայրեր: Սակայն համաձայնություն տալուց որոշ ժամանակ անց, երբ նստիկանները նահանջել են, կազմակերպիչները, մասնավորապես՝ [Դ. Շահնագարյանը] եւ [Ն. Փաշինյանը], կապ հաստատելով [Լ. Տեր-Պետրոսյանի] հետ, վերջինիցս հրահանգներ են ստացել ոչ մի տեղ չգնալ, այլ շարունակել արգելված հավաքը նույն վայրում՝ խախտելով օրենքը: Իրավիճակը կայունացնելու եւ համաձայնության գալու նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ չեզոք քաղաքական գործիչ [Պ. Հայրիկյանը] որոշել են հանդիպել [Լ. Տեր-Պետրոսյանին], սակայն հանդիպելու բոլոր փորձերը մնացել են անպատասխան [Լ. Տեր Պետրոսյանի] կողմից:

Բացի այդ, ցուցարարների կազմակերպիչները, մասնավորապես՝ [Ն. Փաշինյանը], [Հ. Հակոբյանը], [Կ. Սուքիասյանը], [Ս. Մալխասյանը] եւ [Ս. Միքայելյանը] հրահանգներ են ստացել [Լ. Տեր-Պետրոսյանից] ավտոբուսներով, տրոլեյբուսներով եւ մեքենաներով արգելապատնեշներ կառուցել Երեւանի քաղաքապետարանի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի Դաշնության դեսպանատների տարածքում, զինվելու քարերով, երկաթյա ձողերով, փայտե մահակներով եւ դյուրավառ հեղուկով շշերով: Կազմակերպիչները հավաքագրել են նաեւ իրենց այն համակիրներին, որոնք ունեցել են հրազեն եւ զինամթերք՝ նստիկանության զորքերի վրա հարձակվելու եւ խառնաշփոթը մայրաքաղաքի մյուս հատվածներում տարածելու համար:

Մարտի 1-ի կեսօրից Երեւանի քաղաքապետարանի շուրջ կուտակված ամբոխն աստիճանաբար անկառավարելի է դարձել, իսկ երեկոյան նրանց գործողությունները վերջնականապես վերածվել են թալանի ու ջարդերի:

Ամբոխը հրազենային կրակահերթերով, դյուրավառ հեղուկով շշերով, երկաթե ձողերով, երկաթե «ոգնիներով», ինքնաշեն բեկորային պայթուցիկ սարքերով եւ ձեռքի նռնակներով հարձակվել է բացառապես ռետինե մահակներով, վահաններով եւ սաղավարտներով զինված նստիկանության զորքերի վրա: Այս ամենը փաստագրված է տեսանյութերով:

Կարելուք է նշել, որ նստիկանության հետ բախումները տեղի են ունեցել հավաքի

անցկացման վայրից 400-1000 մետր հեռավորության վրա՝ Երեւանի քաղաքապետարանի եւ Ֆրանսիայի դեսպանատան մոտակայքում: Ոստիկանությունն ուժ կիրառելու կամ հավաքը ցրելու մտադրություն չի ունեցել, այլ տեղակայվել է ավելի շուտ հասարակական կարգը պահպանելու եւ խռովարարների կողմից մայրաքաղաքի այլ հատվածներում խառնաշփոթի տարածումը կանխելու նպատակով:

Մի քանի ժամվա ընթացքում ավազակների փոքր խմբեր առանձնացել են 7000 հոգանոց ամբոխից եւ զանգվածային խառնաշփոթի ժամանակ մոտակա փողոցներում այրել ավելի քան երկու տասնյակ մասնավոր եւ ոստիկանական մեքենաներ եւ նույնիսկ շտապ օգնության մեքենաներ: Նրանք շարքից հանել են ավտոբուսներ եւ տրուլեյբուսներ, ավերել եւ թալանել են «Մոսկվայի տունը» [մշակութային կենտրոնը] եւ մոտակա խանութներն ու գրասենյակները: Կոտրել են Երեւանի քաղաքապետարանի եւ Վիվասելի գրասենյակների պատուհանները: Հարբած ավազակների խմբերը հարձակվել են ոստիկանության զորքերի եւ ոստիկանների վրա:

Սաբոտաժը շարունակվել է, եւ ժամը 21:00-ին ՀՀ նախագահին տեղեկացրել են ոստիկանության զորքերի շարքում վիրավորների մասին: Հետագա անկառավարելի զարգացումները եւ անկանխատեսելի հետեւանքները կանխելու նպատակով ՀՀ նախագահը, հիմնվելով Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն իրեն վերապահված իրավունքի վրա, վարչապետի եւ Ազգային ժողովի նախագահի հետ խորհրդակցելուց հետո մարտի 1-ին տեղական ժամանակով ժամը 22:30-ին հայտարարել է 20 օր տեւողությամբ արտակարգ դրություն Երեւան քաղաքում: Ազգային ժողովը մարտի 2-ին ժամը 01:30-ին անհապաղ գումարել է արտահերթ նիստ եւ հաստատել ՀՀ նախագահի հրամանագիրը: Հրամանագրի համաձայն՝ արտակարգ դրությունը սահմանափակվում է Երեւանով, սահմանափակումները նվազագույն են՝ քաղաքում բնականոն կյանքը չխոչընդոտելու համար»:

Գ. Հայաստանի արտաքին գործերի նախարարության կողմից 2008 թվականի մարտի 13-ին ներկայացված, Հայաստանի մշտական ներկայացուցչության կողմից փոխանցված եւ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարության կողմից 2008 թվականի մարտի 14-ին գրանցված վերբալ հայտագրում ներառված հայտարարությունը

47. 2008 թվականի մարտի 13-ի հայտարարության տեքստը շարադրված է հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր հարգանքն է հավաստում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Ն.Գ. պարոն Թերրի Դեւիսին եւ Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (ԵՊՇ թիվ 5) 15-րդ հոդվածի համաձայն՝ պատիվ ունի սույնով փոխանցելու Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը 2008 թվականի մարտի 1-ի ՆՀ-35 հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին:

«2008 թվականի մարտի 1-ի թիվ ՆՀ-35-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ եւ 117-րդ հոդվածի 6-րդ կետերով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության նախագահի 2008 թվականի մարտի 1-ի «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՆՀ-35-Ն հրամանագրի 4-րդ կետի՝

1) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) արգելվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ ակնհայտ սուտ կամ իրավիճակն ապակայունացնող տեղեկատվություն կամ առանց իրազեկման (ապօրինի) միջոցառումների մասնակցության կոչեր, ինչպես նաեւ նման տեղեկատվություն կամ կոչեր որեւէ այլ եղանակով եւ ձևով հրապարակելը կամ տարածելը»:

...

2. Հրամանագիրն ուժի մեջ է մտնում 2008 թվականի մարտի 14-ից:

Դ. Հայաստանի արտաքին գործերի նախարարության կողմից 2008 թվականի մարտի 21-ին ներկայացված, Հայաստանի մշտական ներկայացուցչության կողմից փոխանցված եւ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարության կողմից 2008 թվականի մարտի 21-ին գրանցված վերբալ հայտագրում ներառված շեղումը վերացնելը

48. Շեղումները վերացնելու մասին տեքստը շարադրված է հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր հարգանքն է հավաստում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Ն.Գ. պարոն Թերրի Դեիսին եւ, հղում կատարելով իր՝ 2008 թվականի մարտի 2-ի, 10-ի եւ 13-ի վերբալ հայտագրերին, պատիվ ունի տեղեկացնելու նրան, որ, Հայաստանի Հանրապետության նախագահի 2008 թվականի մարտի 1-ի ՆՀ-35-Ն հրամանագրի 1-ին կետի համաձայն, Երեւան քաղաքում արտակարգ դրությունը հանվել է 2008 թվականի մարտի 20-ի ժամը 24:00-ի դրությամբ:

Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (ԵՊՇ թիվ 5) դրույթներից բոլոր շեղումները վերացնելու մասին»:

III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ

49. 2008 թվականի փետրվարի 19-ի նախագահական ընտրություններին եւ 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին վերաբերող՝ Եվրոպայի խորհրդի համապատասխան եւ այլ միջազգային փաստաթղթերի համար տե՛ս *Մուշեղ Սաղաթելյանի* գործը (վերելում հիշատակված՝ §§ 125-34) եւ *Մյասնիկ Մալխասյանի* գործը (վերելում հիշատակված՝ §§ 50-57): Միջազգային նյութերի մի շարք հատվածներ, որոնք չեն մեջբերվել այդ վճիռներում, ներկայացված են ստորեւ:

Գ. Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի՝ 2008 թվականի մարտի 12-ից 15-ը Հայաստանում հատուկ առաքելության վերաբերյալ զեկույցը, CommDH(2008)11REV, 2008 թվականի մարտի 20

50. Զեկույցի համապատասխան քաղվածքներն ունեն հետևյալ բովանդակությունը.

«Արտակարգ դրության փաստացի գործողության շրջանակը եւ իրականացումը

Հանձնակատարը տարբեր գրուցակիցների հետ ունեցած իր քննարկումներում պարզել է, որ արտակարգ դրությամբ կիրարկված մի շարք սահմանափակումներ ազդեցություն են գործել ամբողջ երկրի վրա, եւ դրանք չեն սահմանափակվել մայրաքաղաքի սահմաններով: Հանրահավաքների եւ ցույցերի նկատմամբ սահմանափակումները կիրառվել են նաեւ մայրաքաղաքից դուրս՝ Հայաստանի այլ գլխավոր քաղաքներում:

Կառավարության ներկայացուցիչը ստիպված վիճարկել է, որ արտակարգ դրությունն անհրաժեշտ միջոցառում էր՝ մայրաքաղաքում եւ ընդհանրապես երկրում օրենքը եւ կարգուկանոնը վերականգնելու համար: Այնուամենայնիվ, Հանձնակատարն այն կարծիքին է, որ կիրառված որոշ սահմանափակումներ չեն նպաստել հասարակությունում հետընտրական եւ մարտի 1-ի իրադարձություններից հետո առկա լարվածությունը կարգավորելուն եւ թուլացնելուն:

Լրատվամիջոցների նկատմամբ սահմանափակումները գործնականում համազգային ազդեցություն են ունեցել: Մի շարք հեռուստաընկերություններ եւ ռադիոկայաններ դադարել են գործել կա՛մ իրենց սեփական որոշմամբ, կա՛մ Ազգային անվտանգության ծառայության կողմից հարկադրված լինելով: Ազգային անվտանգության ծառայության կողմից միջամտությունից հետո համացանցային լրատվական ծառայությունները փակվել են: Խիստ ազդեցության է ենթարկվել տեղեկությունների նկատմամբ մատչելիությունը:

Գրաքննությունը նպաստել է բնակչության շրջանում շշուկներին եւ անհանգստությանն այն մասին, թե ինչ էր կատարվում, այն ժամանակ, երբ պետք է խթանվեին վստահության վերականգնմանն ուղղված միջոցառումները: Այն փաստը, որ իշխանամետ լրատվամիջոցները միտված էին ընդդիմությանն արատավորելու, մինչդեռ ընդդիմության լրագրերը շրջանառությունից հանված էին, չի նպաստել կառուցողական մթնոլորտին:

Նախագահը մարտի 12-ին որոշել է աստիճանաբար փոփոխել լրատվամիջոցների լուսաբանմանը վերաբերող դրույթները: Հանձնակատարին թվում է, որ այդ

փոփոխությունները քիչ գործնական ազդեցություն ունեն տեղեկությունների հոսքի եւ աղբյուրների բազմակարծության վրա: Գրաքննության գործող մակարդակը, կարծես թե, փաստացի պահպանվել է, որն այդքան անհրաժեշտ վստահությունը վերականգնելուն չի նպաստում»:

Բ. «Հյումն Բայթս Ուոթչ»-ի զեկույցը. Ժողովրդավարությունը քարքարոտ [հիմքերին], Հայաստանի 2008 թվականի վիճարկված նախագահական ընտրությունները, հետընտրական բռնությունները եւ միակողմանի պատասխանատվության ենթարկելու քաղաքականությունը, 2009 թվականի փետրվար

51. Զեկույցի համապատասխան քաղվածքներն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«Արտակարգ դրությունը

[Մարտի 1-ին] մոտավորապես երեկոյան ժամը 10:30-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանը ստորագրել է հրամանագիր ...՝ Հայաստանում հայտարարելով արտակարգ դրություն: [Մարտի 2-ին] Ազգային ժողովը պաշտոնապես հաստատել է արտակարգ դրությունը: Հրամանագիրը շարունակել է ուժի մեջ լինել 20 օր, եւ դրանով խիստ սահմանափակումներ են կիրառվել, այդ թվում՝ բոլոր զանգվածային հավաքների նկատմամբ, եւ պահանջ, որ բոլոր լրատվամիջոցներն իրենց ներպետական լուսաբանման ընթացքում օգտագործեն միայն պաշտոնական տեղեկություններ: «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի (RFE/RL) հայերեն հեռարձակումը հանվել է եթերից, իսկ դրա կայքն արգելափակվել է: Անվտանգության ծառայությունների կարգադրությամբ ինտերնետ ծառայություններ մատուցողներն արգելափակել են բազմաթիվ այլ առցանց լրատվամիջոցներ, այդ թվում՝ «Ա1+»-ը, «Հայկական ժամանակ»-ը եւ «Առավոտ»-ը: Արտակարգ դրության ընթացքում արգելվել է բոլոր ընդդիմամետ լրագրերի հրապարակումը այն բանից հետո, երբ դրանք տպարաններում անցել են անվտանգության ծառայության ներկայացուցիչների կողմից նախազննություն: «Չորրորդ իշխանության» գլխավոր խմբագիրը «Հյումն Բայթս Ուոթչ»-ին ասել է, որ նա եւ իր անձնակազմը երկու անգամ [մարտի 4-ին եւ 13-ին] փորձել են հրապարակել լրագիրը, սակայն տպարանը նրանց առանց որեւէ բացատրության մերժել է այն բանից հետո, երբ թողարկումները ստուգվել են անվտանգության ոլորտի պաշտոնատար անձանց կողմից: Թեւեւ [մարտի 13-ին] լրատվամիջոցների նկատմամբ սահմանափակումները հանվել են, անվտանգության ծառայության ներկայացուցիչները շարունակել են միջամտել ընդդիմության լրագրերի տպագրմանը՝ նրանց թույլատրելով հրապարակել միայն [մարտի 21-ին]»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՐՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

52. Դատարանը նշում է, որ ի սկզբանե՝ 2008 թվականի մարտի 4-ին, Հայաստանի կառավարությունը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ծանուցել է Կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսված՝ Կոնվենցիայով երաշխավորված մի շարք իրավունքներից, այդ թվում՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքներից իրենց շեղման մասին (տե՛ս վերելում 45-րդ եւ 46-րդ պարբերությունները): Հետեւաբար Դատարանը պետք է նախ անդրադառնա այն հարցին, թե արդյոք սույն գործով բավարարված են եղել Կոնվենցիայի 15-րդ հոդվածով սահմանված՝ պարտավորություններից շեղման իրավունքն իրականացնելու պայմանները: Կոնվենցիայի 15-րդ հոդվածն ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետեւանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի եւ 7-րդ հոդվածի դրույթներից:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների եւ դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաեւ այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու եւ Կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

Ա. Կողմերի փաստարկները

53. Կառավարությունը նշել է, որ Հայաստանի կողմից Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից շեղումը համատեղելի է եղել Կոնվենցիայի 15-րդ հոդվածի պահանջների հետ: Կառավարությունը հետևել է սահմանված ընթացակարգին՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին պատշաճ ծանուցելով կիրառած միջոցառումների եւ դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Հղում կատարելով *Լոլեսն ընդդեմ Իռլանդիայի* [*Lawless v. Ireland*] գործին (թիվ 3) (1961 թվականի հուլիսի 1, § 28, շարք Ա, թիվ 3)՝ Կառավարությունը վիճարկել է, որ Երեւանում 2008 թվականի մարտի 1-ին առկա է եղել «ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն», քանի որ առկա է եղել բացառիկ արտակարգ իրավիճակ, որն ազդեցություն է գործել բնակչության վրա եւ վտանգ է ներկայացրել ազգի կազմակերպված կյանքին: Այն հանգամանքները, որոնք դարձել են արտակարգ դրություն հայտարարելու պատճառ, ներկայացվել են 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների պաշտոնական նկարագրության մեջ, որը Գլխավոր քարտուղարին է տրամադրվել 2008 թվականի մարտի 6-ի Բանավոր նոտայում (տե՛ս վերելում 46-րդ պարբերությունը), ինչպես նաեւ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության մեջ (տե՛ս վերելում 43-րդ պարբերությունը): Մասնավորապես 2008 թվականի մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում բախումներ են տեղի ունեցել ոստիկանության եւ ցուցարարների միջեւ, որոնցից մի քանիսն ապօրինի ունեցել եւ փաստացի կրել է զենք եւ զինամթերք: Կեսօրից հետո Երեւանի քաղաքապետարանին հարող տարածքում առկա ամբոխն սկսել է աստիճանաբար անկառավարելի դառնալ, եւ երեկոն ուղեկցվել է կոտորածներով եւ թալանով: Ցուցարարներն այրել եւ ջարդել են մոտ 100 մասնավոր եւ հանրային ավտոմեքենա, ջարդել եւ թալանել են «Մոսկվայի տունը» եւ հարակից խանութներն ու գրասենյակները, ջարդել են վարչական շենքերի եւ մասնավոր գրասենյակների պատուհանները եւ հարձակվել են ոստիկանության վրա: Այդ խռովությունների արդյունքում տասը մարդ է զոհվել: Այդ իրավիճակը հաղթահարելու միակ ուղին արտակարգ դրություն հայտարարելն է եղել, ինչը հաստատվել է նաեւ

Ժամանակավոր հանձնաժողովի եզրահանգումներով: Կառավարությունը Դատարանին հիշեցրել է, որ վերջինիս նախադեպային իրավունքի համաձայն, երբ Պայմանավորվող կողմերը որոշում են, թե արդյոք առկա է եղել արտակարգ իրավիճակ եւ եղել են այն հաղթահարելու համար անհրաժեշտ միջոցներ, օգտվում են հայեցողական լիազորությունների լայն շրջանակից:

54. Դիմումատու ընկերությունը նշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում՝ առանց բացահայտ ձեռով Կոնվենցիայի 15-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ դիրքորոշում հայտնելու:

Բ. Դատարանի գնահատականը

55. Դատարանն ի սկզբանե նշում է, որ սույն գործով չի վիճարկվել այն հանգամանքը, որ Հայաստանի կողմից արված՝ պարտավորություններից շեղման մասին ծանուցումը բավարարել է Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պաշտոնական պահանջները, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկել Կոնվենցիայից շեղման միջոցով կիրառված միջոցառումների եւ դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Համապատասխանաբար այն պատրաստ է ընդունել, որ այս պաշտոնական պահանջը բավարարվել է (տե՛ս, *mutatis mutandis*, *Մեհմեթ Հասան Ալթան ընդդեմ Թուրքիայի* [*Mehmet Hasan Altan v. Turkey*], թիվ 13237/17, § 89, 2018 թվականի մարտի 20):

56. Դատարանն այնուհետեւ նշում է, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած ՌԲարձր պայմանավորվող կողմ իրավունք ունի շեղում կատարելու Կոնվենցիայով սահմանված իր պարտավորություններից՝ բացի այդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշվածներից, պայմանով, որ այդ միջոցառումները խստորեն համաչափ են դրության լրջությանը, եւ որ դրանք չեն հակասում միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորություններին (տե՛ս վերելում հիշատակված՝ *Լոլեսի* գործը, § 22 եւ

վերելում հիշատակված՝ *Մեհմեթ Հասան Ալթանի գործը*, § 90):

57. Դատարանը վերահաստատում է, որ, պատասխանատվություն կրելով «[իր] ազգի կյանքի համար», յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է որոշի՝ արդյոք կյանքին սպառնացող վտանգը պայմանավորված է «արտակարգ իրավիճակով», եւ այդ դեպքում սահմանի, թե ինչպիսի միջոցառումներ է անհրաժեշտ ձեռնարկել արտակարգ իրավիճակը հաղթահարելու համար: Իրավիճակից բխող խիստ անհրաժեշտության հետ ուղղակի եւ մշտական շփման շնորհիվ ազգային մարմինները սկզբունքորեն կարող են ավելի արդյունավետորեն որոշել այդպիսի արտակարգ իրավիճակի առկայությունը եւ դա վերացնելու համար շեղումների բնույթն ու շրջանակը, քան միջազգային դատավորը: Համապատասխանաբար ազգային մարմիններին այդ հարցում պետք է վերապահվի հայեցողական լիազորությունների լայն շրջանակ: Այդուհանդերձ, Պայմանավորվող կողմերը չեն օգտվում անսահմանափակ հայեցողությունից: Դատարանն է որոշում՝ արդյոք, *inter alia*, պետությունները դուրս են եկել «բացառապես ճգնաժամի դրության լրջությամբ պահանջվող չափերից»: Գնահատման ներպետական սահմանն այդպիսով ուղեկցվում է եվրոպական վերահսկողությամբ: Այդ վերահսկողությունն իրականացնելիս Դատարանը պետք է պատշաճ կշիռ տա այնպիսի գործոններին, ինչպիսիք են պարտավորություններից շեղման արդյունքում ազդեցության ենթարկված իրավունքի բնույթը եւ այն հանգամանքները, որոնք հանգեցրել են արտակարգ իրավիճակին, եւ դրա տևողությունը (տե՛ս *Բրաննինգանը եւ ՍրբԲրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Brannigan and McBride v. the United Kingdom*], 1993 թվականի մայիսի 26, § 43, շարք Ա, թիվ 258-Բ, Ա.-ն եւ այլք ընդդեմ *Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*A. and Others v. the United Kingdom*] [GC], թիվ 3455/05, § 173, ՄԻԵԴ 2009 եւ վերելում հիշատակված՝ *Մեհմեթ Հասան Ալթանի գործը*, § 91):

58. Կառավարությունը սույն գործով վիճարկել է, իսկ դիմումատու ընկերությունը բացահայտ չի վիճարկել, որ Երեւանում 2008 թվականի մարտի 1-ին առկա իրավիճակը, ինչպես նկարագրված է 2008 թվականի մարտի 6-ի հայտարարության մեջ, այնպիսին է եղել, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի

իմաստով լուրջ վտանգ է ներկայացրել ազգի կյանքին (տե՛ս վերելում 53-րդ պարբերությունը): Իրականացված միջոցառումների անհրաժեշտությունը հաստատվել է նաև Ազգային ժողովի հարցմամբ (տե՛ս վերելում 43-րդ պարբերությունը): Ընդունելով, որ Հայաստանի գործադիր իշխանության եւ Ազգային ժողովի՝ այս հարցի վերաբերյալ վճռին պետք է կշիռ տրվի, Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ արտակարգ դրություն հայտարարելու անհրաժեշտությունը եւ ներգրավված կոնկրետ միջոցառումներն ակնհայտորեն ներպետական մակարդակով երբեք չեն ենթարկվել որեւէ դատական մանրամասն ուսումնասիրության (ի հակադրություն՝ վերելում հիշատակված՝ *Ա.-ի եւ այլոց* գործը, § 177 եւ վերելում հիշատակված՝ *Մեհմեթ Հասան Ալթանի* գործը, § 93):

59. Դատարանն այս կապակցությամբ վերահաստատում է, որ 15-րդ հոդվածի համատեքստում «ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության» բառերի բնական եւ սովորութային իմաստը վերաբերում է «ճգնաժամային բացառիկ իրավիճակին, որն ազդեցություն է գործում ամբողջ բնակչության վրա եւ վտանգ է ներկայացնում այն համայնքի կազմակերպված կյանքին, որից կազմված է պետությունը» (տե՛ս վերելում հիշատակված՝ *Լոլեսի* գործը, § 28): Հանձնաժողովը նախկինում վճռել է, որ շեղումն արդարացնելու համար արտակարգ իրավիճակը պետք է լինի փաստացի եւ անմիջական, որ այն պետք է ազդեցություն գործի ամբողջ ազգի վրա այնքանով, որքանով վտանգված է եղել համայնքի կազմակերպված կյանքի շարունակականությունը, եւ որ ճգնաժամը կամ վտանգը պետք է լինի բացառիկ այն առումով, որ Կոնվենցիայով հանրային անվտանգության, առողջության եւ կարգուկանոնի պահպանության համար թույլատրվող միջոցառումները կամ սահմանափակումներն ակնհայտորեն պատշաճ չեն (տե՛ս *Դանիան, Նորվեգիան, Շվեդիան եւ Նիդեռլանդներն ընդդեմ Հունաստանի* [*Denmark, Norway, Sweden and the Netherlands v. Greece*], թիվ 3321/67, 3322/67 եւ 3344/67, Հանձնաժողովի 1969 թվականի նոյեմբերի 5-ի զեկույցը, Տարեգիրք 12, էջ 70, § 113):

60. Անդրադառնալով Երեւանում 2008 թվականի մարտի 1-ին առկա իրավիճակին՝ Դատարանն ի սկզբանե նշում է, որ տվյալ իրադարձությունները

տասն օր տեւած խաղաղ բողոքի գագաթնակետն էին, որը տեղի էր ունեցել Հայաստանի մայրաքաղաքում այն նախագահական ընտրություններից հետո, որը շատերի կարծիքով կեղծված էր: Դատարանն արդեն իսկ քննել է Ազատության հրապարակում տեղի ունեցած բողոքների եւ այնտեղ 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան իրականացված ոստիկանական գործողությունների հանգամանքները եւ գտել է, որ չկար ապացույց, որը կվկայեր, որ այդ օրը խռովություններ հրահրելու նպատակով ցուցարարներին պետք է զենքեր բաժանվեին, կամ որ ցուցարարներն առաջինն էին հարձակվել ոստիկանության վրա: Ավելին, Դատարանը նախկինում նշել է մի շարք արժանահավատ զեկույցների առկայությունը, որոնցից պարզ է դառնում, որ ոստիկանությունն անհիմն եւ անհամաչափ ուժ է կիրառել Ազատության հրապարակում հավաքված ցուցարարների նկատմամբ, եւ ոստիկանության կողմից ցուցարարների ցրվելու մասին նախկինում որեւէ կարգադրություն չի տրվել (տե՛ս վերելում հիշատակված՝ *Մուշեղ Մաղաթեղյանի* գործը, §§ 230-33 եւ 247): Դատարանը նշում է, որ Կառավարությունը սույն գործով չի ներկայացրել որեւէ ապացույց, որը կարող էր ստիպել կասկածի տակ դնել վերոնշյալ զեկույցները կամ *Մուշեղ Մաղաթեղյանի* գործով արված եզրահանգումները:

61. Դատարանն այնուհետեւ նշում է, որ Ազատության հրապարակում հավաքը ցրվելուց հետո տարբեր վայրերում, մասնավորապես՝ Մյասնիկյանի արձանին եւ Երեւանի քաղաքապետարանին հարող տարածքում մեծ ամբոխ է հավաքվել (տե՛ս վերելում 7-րդ եւ 8-րդ պարբերությունները): Թեեւ պարզվում է, որ ցուցարարների եւ իրավապահ մարմինների միջեւ այդ պահին լարվածությունը մեծ էր, Դատարանն իր տրամադրության տակ չունի բավարար նյութեր՝ պարզելու համար, թե ինչպես է զարգացել իրավիճակը եւ վերջիվերջո անկառավարելի դարձել, որ հանգեցնի զինված հակամարտության, գույքի վնասման եւ մահերի: Այնուամենայնիվ, այն հաշվի է առնում Հայաստանի դեմ մեկ այլ գործով արված իր եզրահանգումները, որով այն վճռել է, որ 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան Ազատության հրապարակում հավաքի ցրումը, ինչպես նաեւ մի շարք այլ համանման կամ անկառավարելի իրադարձությունները, որոնք տեղի են

ունեցել այդ օրն ավելի ուշ, կարող են դերակատարում ունեցած լինել բռնության վերջնական սրացման վրա՝ ի հակադրություն դրա՝ ծրագրված եւ կազմակերպված անկարգություն կամ հեղաշրջման փորձ լինելուն (տե՛ս *Մյասնիկ Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* [*Myasnik Malkhasyan v. Armenia*], թիվ 49020/08, § 80, 2020 թվականի հոկտեմբերի 15): Ավելին, Կառավարության 2008 թվականի մարտի 6-ի հայտարարությունից (տե՛ս վերելում 46-րդ պարբերությունը) եւ մի շարք զեկույցներից, այդ թվում՝ Հայաստանի օմբուդսմենի զեկույցից պարզվում է (տե՛ս վերելում հիշատակված՝ *Մյասնիկ Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* գործը, §§ 49 եւ 57), որ Մյասնիկյանի արձանի մոտ հավաքված մի քանի հազար մարդուց կազմված մեծ ամբոխն այդ ժամանակահատվածում շարունակել է խաղաղ լինել, իսկ բռնությունը կատարվել է ցուցարարների փոքր խմբերի կողմից՝ մի շարք հարակից փողոցներում: Որեւէ ապացույց չի ներկայացվել՝ ապացուցելու համար, որ բռնություն կատարած ցուցարարները զինված են եղել ինքնաշեն առարկաներից բացի որեւէ այլ բանով՝ ի հակադրություն հրազենի կամ համանման զենքերի, ինչպես պնդում է Կառավարությունը (տե՛ս նաեւ վերելում հիշատակված՝ *Մուշեղ Սադաթեյյանի* գործը, § 129 եւ վերելում հիշատակված՝ *Մյասնիկ Մալխասյանի* գործը, § 80): Ոչ էլ առկա է որեւէ ապացույց, որը կվկայեր, որ մահերից որեւէ մեկն առաջացել է ցուցարարների դիտավորյալ կամ նույնիսկ պատահական գործողությունների հետեւանքով:

62. Այսպիսով, ընդունելով, որ 2008 թվականի մարտի 1-ին Երեւանում առկա իրավիճակն անկասկած շատ լարված է եղել եւ կարող էր համարվել հասարակական կարգուկանոնին սպառնացող լուրջ իրավիճակ, Դատարանը, այդուհանդերձ, համարում է, որ Կառավարությունը համոզիչ կերպով չի ապացուցել եւ ապացույցներով չի հիմնավորել իր այն պնդումը, որ ընդդիմության ցույցերը, որոնք, ավելին, ակնհայտորեն բախվել էին ոստիկանության կողմից կոպիտ միջամտության, կարող էին Կոնվենցիայի 15-րդ հոդվածի իմաստով որակվել որպես «ազգի կյանքին սպառնացող» արտակարգ դրություն (համեմատի՛ր հետեւյալի հետ՝ վերելում հիշատակված՝ *Լոլեսի* գործը, §§ 28-29, *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Ireland v. the United Kingdom*], 1978

թվականի հունվարի 18, § 205, շարք Ա, թիվ 25, վերելում հիշատակված՝ *Բրաննիզանի եւ ՄըքԲրայդի* գործը, § 47, *Ասկոյն ընդդեմ Թուրքիայի* [Aksoy v. Turkey], 1996 թվականի դեկտեմբերի 18, § 70, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1996-VI, վերելում հիշատակված՝ *Ա.-ի եւ այլոց* գործը, §§ 177-81 եւ վերելում հիշատակված՝ *Մեհմեթ Հասան Ալթանի* գործը, § 93): Հետեւաբար Դատարանը չունի բավարար ապացույցներ՝ եզրակացնելու համար, որ ընդդիմության բողոքները, որոնք պաշտպանված են Կոնվենցիայի 11-րդ հոդվածով, նույնիսկ, եթե եղել են զանգվածային եւ ժամանակ առ ժամանակ ուղեկցված բռնությամբ (տե՛ս *Ֆրումկինն ընդդեմ Ռուսաստանի* [Frumkin v. Russia], թիվ 74568/12, § 99, 2016 թվականի հունվարի 5, եւ դրանում հիշատակված վճիռները եւ ամենավերջինը՝ *Շմորգունովը եւ այլք ընդդեմ Ուկրաինայի* [Shmorgunov and Others v. Ukraine], թիվ 15367/14 եւ 13 այլ, §§ 490-52, 2021 թվականի հունվարի 21), շեղումն արդարացնող իրավիճակ են եղել:

63. Հանգելով այս եզրակացությանը՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում որոշել, թե արդյոք սույն գործով ձեռնարկված միջոցառումները խստորեն պահանջվել են դրության լրջությամբ եւ համատեղելի են եղել միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ, եւ եզրակացնում է, որ Հայաստանի շեղումը չի բավարարում Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

64. Դիմումատու ընկերությունը բողոքել է, որ արտակարգ դրություն հայտարարելու մասին նախագահի հրամանագրով սահմանված սահմանափակումների հետեւանքով իր հրապարակումների նկատմամբ դրված արգելքը տեղեկություն ստանալու եւ տարածելու իր իրավունքին անհիմն միջամտություն է: Դիմումատու ընկերությունը հիմնվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վրա, որով, այնքանով, որքանով այն վերաբերում է գործին, սահմանվում

է հետեւյալը.

«1. Յուրաքանչյուր որ ունի ազատ արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաեւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Ա. Ընդունելիությունը

65. Դատարանը նշում է, որ այս բողոքը ո՛չ ակնհայտորեն անհիմն է, ո՛չ էլ անընդունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատու ընկերությունը

66. Դիմումատու ընկերությունը նշել է, որ այն եղել է ընդդիմադիր լրագիր, որը հավաքել եւ տարածել է իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական տեղեկություններից էապես տարբերվող տեղեկություններ, եւ տվյալ ժամանակահատվածում այն տպագրել է Հայաստանում ամենամեծ տպաքանակն ունեցող օրաթերթը: Նախընտրական քարոզարշավի եւ ինքնին ընտրության

ընթացքում այն եղել է զանգվածային լրատվության այն քիչ միջոցներից մեկը, որը լուսաբանել է ընդդիմադիր դեկավար պրն Տեր-Պետրոսյանի նախընտրական քարոզարշավը եւ մյուս թեկնածուներին ընձեռել է իրենց նախընտրական ծրագիրը ներկայացնելու հնարավորություն: 2008 թվականի փետրվարի 20-ից մինչեւ 29-ը լրագիրը լուսաբանել է ամեն օր տեղի ունեցող բողոքի ակցիաները՝ ի տարբերություն պաշտոնական զանգվածային լրատվության միջոցների, որոնք անտեսել են ժողովրդական ցույցը: Իշխանությունները կարծիքն ազատ արտահայտելու ցանկացած դեպք դիտարկել են որպես իրենց ավտորիտար ռեժիմի համար սպառնալիք, եւ 2008 թվականի մարտի 1-ին արտակարգ դրություն հայտարարելը նրանց համար մոտալուտ ժողովրդավարական փոփոխություններից իրենց փրկելու միակն ուղին էր: Այսպիսով, նրանք «կազմակերպել են զանգվածային ջարդ», դաժան վերաբերմունք են ցուցաբերել այլախոհների նկատմամբ եւ նրանց նկատմամբ գործադրել են լայնածավալ ճնշումներ: Համանման ձեռով փակվել են մի շարք այլ ընդդիմադիր եւ չեզոք օրաթերթեր: Թույլատրվել է միայն իշխանամետ թերթերի տպագրությունը. դրանցում բողոքի շարժումը ներկայացվել է որպես «օտարերկրյա ներխուժում»: Այդպիսով, նախագահի հրամանագրով արգելվել է 2008 թվականի մարտի 1-ից մինչեւ 8-ն ընկած ժամանակահատվածում լրագրի համարների տպագրությունը, եւ դրանով միջամտել են տեղեկություններ հավաքելու եւ տարածելու իր իրավունքին:

67. Համաձայն դիմումատու ընկերության՝ օրենքով սահմանված չի եղել նրա՝ 10-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին միջամտությունը: Սահմանադրության 44-րդ հոդվածը (տե՛ս վերելում 30-րդ պարբերությունը) չի կարող մեկնաբանվել որպես արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում արտահայտվելու ազատության նկատմամբ սահմանափակումների կիրառումը թույլատրող: Ավելին, սահմանադրական այս դրույթը, որպես կանոն, պետք է լրացվեր արտակարգ դրության իրավական ռեժիմը կարգավորող առավել մանրամասն եւ հատուկ իրավական ակտով, ինչպես հստակ նշված է Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետում (տե՛ս վերելում 31-րդ պարբերությունը): Հետեւաբար միայն սահմանադրական դրույթներին հղում

կատարելով՝ արտակարգ դրության հայտարարումը եղել է անընդունելի: Այսպես վարվելով՝ Հայաստանի նախագահն ինքն է սահմանել արտակարգ դրության իրավական ռեժիմը:

68. Ավելին, նախագահի հրամանագիրը, որով հայտարարվել էր արտակարգ դրություն, չէր հետապնդում որեւէ իրավաչափ նպատակ, քանի որ միակ նպատակը, որը հետապնդել են իշխանությունները, եղել է ցանկացած գնով իշխանությունը պահելը: Սա նաեւ անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում, քանի որ Հայաստանը եղել է այնպիսի երկիր, որտեղ 1995 թվականից ի վեր բոլոր ընտրությունները կեղծվել են, չեն եղել անկախ դատարաններ կամ լրատվության միջոցներ, եւ եղել են քաղաքական բանտարկյալներ, եւ որն այդ իսկ պատճառով չէր կարող համարվել «ժողովրդավարական հասարակություն»: Կառավարությունը չէր հիմնավորել միջամտության անհրաժեշտությունը եւ այս առնչությամբ հղում է կատարել միայն Ազգային ժողովի համապատասխան ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությանը (տե՛ս վերելում 43-րդ պարբերությունը), որում, սակայն, առկա չէ որեւէ ողջամիտ փաստարկ՝ ի հիմնավորումն արտակարգ դրության ընթացքում արտահայտվելու ազատության նկատմամբ սահմանված սահմանափակումների: Ավելին, հիշյալ Հանձնաժողովը գործադիր իշխանությունից անկախ չի եղել, եւ դրա եզրահանգումները եղել են իրականությունից կտրված, ինչը հաստատվել է նաեւ այն հանգամանքով, թե որքան տարբեր են այդ եզրահանգումներն Օմբուդսմենի կատարած եզրահանգումներից (տե՛ս վերելում 44-րդ պարբերությունը):

բ) Կառավարությունը

69. Կառավարությունը նշել է, որ դիմումատու ընկերության՝ 10-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտում տեղի չի ունեցել: Մասնավորապես դիմումատու ընկերության իրավունքներին միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, մասնավորապես՝ Հայաստանի նախագահի՝ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետով ընդունված հրամանագրով, որը

ձեռակերպվել է բավականաչափ ճշգրիտ եւ հասանելի է եղել հանրությանը: Միջամտությամբ հետապնդվել է իրավաչափ նպատակ, մասնավորապես՝ Հայաստանի սահմանադրական կարգին սպառնացող վտանգի կանխում եւ բնակչության իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն: Ինչ վերաբերում է միջամտության անհրաժեշտությանը, Կառավարությունը եւս մեկ անգամ հիշատակել է այն կոնկրետ իրավիճակը, որը ստեղծվել էր Երեւանում 2008 թվականի մարտի 1-ին, եւ պնդել է, որ սահմանափակումների կիրառումը ծայրահեղ սոցիալական անհրաժեշտություն է եղել: Ավելին, Դատարանի նախադեպային իրավունքում մեկնակետ է եղել այն, որ լրագրողների՝ համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկությունների տարածման իրավունքի պաշտպանությամբ նրանցից պահանջվում է գործել բարեխղճորեն՝ օգտագործելով ճշգրիտ փաստական հիմք, եւ տրամադրել հավաստի ու ճշգրիտ տեղեկություններ՝ լրագրողական էթիկային համապատասխան, որը ներառում է նաեւ հրապարակումից առաջ ցանկացած տեղեկություն ստուգելու պարտականությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաեւ հետագա այն ծանր հետեւանքները կանխելու համար, որոնք կարող էին ի հայտ գալ մամուլում տեղ գտած կեղծ եւ թշնամություն սերմանող տեղեկությունների ու պատմությունների հետեւանքով, ինչը խթան է հանդիսացել բռնության, զինված դիմակայության, ապստամբության համար եւ հրահրել է հասարակական անկարգություններ, իրավիճակը հսկողության տակ պահելու նպատակով հրամանագրով սահմանվել են սահմանափակումներ, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների կողմից կատարվող հրապարակումների նկատմամբ սահմանափակում, ինչը պետք է համարվի ողջամիտ հիմքերով իրավաչափ միջոցառում:

2. Ներգրավված երրորդ կողմի դիտարկումները

70. Ներգրավված երրորդ կողմը՝ «Մեդիա Լիգը Դիֆենս» նախաձեռնությունը, նշել է, որ թե՛ 2008 թվականի մարտի 1-ի եւ թե՛

2008 թվականի մարտի 13-ի հրամանագրերով (տե՛ս վերելում 11-րդ եւ 14-րդ պարբերությունները) զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների նկատմամբ սահմանված սահմանափակումներն իրենց սահմանափակող ազդեցությամբ եղել են անընդունելիորեն ընդգրկուն: Առաջին արգելքը չի բավարարել արտահայտվելու ազատության հիմնական պահանջները եւ անհրաժեշտության որեւէ շեմ, իսկ կեղծ կամ ապակայունացնող տեղեկություններ հրապարակելու նկատմամբ հետագա արգելքը համանման ձեւով եղել է անորոշ ու որեւէ իրավաչափ նպատակի ծառայելու փոքր հավանականությամբ, որեւէ առնչություն չի ունեցել որեւէ նպատակի հետ, որը կարող է դրվել դրա հիմքում: Արտահայտվելու ազատության իրավունքը տարածվում էր բոլոր տեսակի տեղեկությունների եւ կարծիքների, այդ թվում՝ «կեղծ» տեղեկությունների տարածումից պաշտպանության վրա: Կեղծիքը դժվար էր սահմանել, եւ հետեւաբար օրենքները, որոնցով արգելվել են կեղծ նորությունները, թե՛ ինքնին անարդար էին եւ թե՛ կարող էին ոչ նպատակային օգտագործվել պետական իշխանությունների կողմից: Այդպիսի օրենքները նաեւ լուրջ կաշկանդող ազդեցություն են ունեցել թղթակիցների վրա, քանի որ դրանք անխուսափելիորեն հանգեցնում են ինքնագրաքննության: Սա է պատճառը, որ բոլոր իրական ժողովրդավարական պետություններում հրաժարվել են կեղծ լուրերն արգելող օրենքներից: Ներգրավված երրորդ կողմը կոչ է արել Դատարանին հատկապես զգույշ լինել արտահայտվելու ազատության նկատմամբ սահմանված սահմանափակումներն ընդունելու հարցում այն դեպքում, երբ հատկապես բարձր է վտանգը, որ գործող վարչակազմը փորձում է վերահսկել զանգվածային լրատվության միջոցները եւ ճնշել ընդդիմությանը: Արտակարգ դրության առկայությամբ չէր կարող հիմնավորվել կեղծ լուրերն արգելող օրենքների առկայությունը, քանի որ քիչ է հավանականությունը, որ դրանք կարող են էապես օգնել հասարակական անկարգությունները կանխելու հարցում, եւ ավելի մեծ է հավանականությունը, որ դրանք կօգտագործվեն իշխանությունների կողմից՝ տարակարծությունը ճնշելու համար, մասնավորապես՝ ընտրությունների նախաշեմին: Պետություններն իրենց տրամադրության ներքո ունեցել են

հասարակական կարգը պահպանելու զանազան այլ արդյունավետ միջոցներ, այդ թվում՝ բռնության հրահրումը կարգավորող դրույթներ: Նույնիսկ կարելի է ասել, որ արտահայտվելու անսահմանափակ ազատության անհրաժեշտությունը շատ ավելի մեծ է եղել արտակարգ դրությունների ընթացքում, քան որեւէ այլ ժամանակ: Այսպիսով, ազգային անվտանգությունը պաշտպանելու համար տեղեկությունների սահմանափակման նպատակի համար կարելու է հարցը ոչ թե ճշմարտությունը կամ կեղծիքն էր, այլ արդյոք սահմանափակումը խիստ անհրաժեշտ էր այդ նպատակն իրագործելու համար: Դատարանը հետեւաբար պետք է ուղղորդվի բազմաթիվ երկրների, այդ թվում՝ Կանադայի, Ուգանդայի, Զիմբաբվեի, Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Անտիգուա եւ Բարբուդայի ազգային գերագույն դատարանների, ինչպես նաեւ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից որդեգրված մոտեցմամբ, եւ վճռի, որ կեղծ լուրերն արգելող օրենքներն անհամատեղելի են 10-րդ հոդվածի հետ, եւ որ Կոնվենցիայից որեւէ շեղմամբ դրանք չեն կարող մեկնաբանվել որպես իրավաչափ:

3. Դատարանի գնահատականը

ա) Արդյոք տեղի է ունեցել դիմումատու ընկերության՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին միջամտություն

71. Կողմերը չեն վիճարկում այն հանգամանքը, որ տեղի է ունեցել դիմումատու ընկերության՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին միջամտություն: Դատարանը համարում է, որ դիմումատու ընկերության հրապարակումների նկատմամբ սահմանված սահմանափակումներն անկասկած նրա արտահայտվելու ազատությանը, այդ թվում՝ 10-րդ հոդվածի իմաստով տեղեկություններ տարածելու իրավունքին միջամտություն են:

բ) Արդյոք միջամտությունը հիմնավորված էր

72. Դատարանը վերահաստատում է, որ միջամտությամբ կխախտվի Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, եթե այն չի բավարարում այդ հոդվածի երկրորդ կետի պահանջները: Հետևաբար դեռևս պետք է որոշել, թե արդյոք սույն գործում նշված միջամտությունը «նախատեսված է օրենքով», հետապնդում է 2-րդ կետում նշված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակ եւ արդյոք «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում» դրանք իրագործելու համար (տե՛ս *Շահին Ալիյայի* գործը՝ վերելում հիշատակված, § 172):

73. Այս կապակցությամբ Դատարանը վերահաստատում է, որ 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով «նախատեսված են օրենքով» արտահայտությամբ առաջին հերթին պահանջվում է, որ վիճարկվող միջոցառման համար որոշակի հիմք ապահովվի ներպետական օրենսդրությամբ. այն նաեւ վերաբերում է տվյալ օրենքի որակին՝ պահանջելով, որ այն հասանելի լինի համապատասխան անձին, որն, ավելին, պետք է կարողանա կանխատեսել դրա հետեւանքները, եւ որ այն համատեղելի լինի օրենքի գերակայության հետ (նույն տեղում՝ § 173):

74. Սույն գործով կողմերը վիճարկել են այն հարցը, թե արդյոք միջամտությունը եղել է օրենքով նախատեսված: Դատարանը նշում է, որ Հայաստանի նախագահի՝ Երեւանում արտակարգ դրություն հայտարարելու մասին 2008 թվականի մարտի 1-ի հրամանագրի հիման վրա դիմումատու ընկերությանն արգելվել է հրապարակումներ անել (տե՛ս վերելում 11-րդ պարբերությունը): Դիմումատու ընկերությունը պնդել է, սակայն, որ նախագահը Սահմանադրությամբ լիազորված չի եղել հայտարարելու արտակարգ դրություն (տե՛ս վերելում 67-րդ պարբերությունը):

75. Հաշվի առնելով համապատասխան ներպետական դրույթները՝ Դատարանը նշում է, որ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ մասով նախագահը լիազորված է Հայաստանի սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում հայտարարել արտակարգ դրություն (տե՛ս վերելում 31-րդ պարբերությունը): Համաձայն նույն հոդվածի՝ արտակարգ

դրության իրավական ռեժիմը պետք է մանրամասն սահմանվեր առանձին օրենքով: Սակայն Սահմանադրության 117-րդ հոդվածի 6-րդ կետի ձեւակերպումից պարզ է դառնում, որ մինչեւ այդ օրենքն ընդունելը նախագահը միայն լիազորված է եղել ձեռնարկել իրավիճակից թելադրվող միջոցառումներ, որոնք խիստ անհրաժեշտ են՝ հաշվի առնելով սահմանադրական կարգին սպառնացող կոնկրետ վտանգը (տե՛ս վերելում 33-րդ պարբերությունը): Դատարանը նշում է, որ տվյալ ժամանակահատվածում այդպիսի օրենք չի ընդունվել: Հետեւաբար հարց է ծագում, թե արդյոք արտակարգ դրություն հայտարարելն իրավաչափ է եղել: Դատարանը, սակայն, պատրաստ է, գործի հանգամանքներով պայմանավորված, թողնել այս հարցը չլուծված՝ հաշվի առնելով կիրառված սահմանափակումների անհրաժեշտության առնչությամբ ստորեւ ներկայացված իր եզրահանգումները: Այն նաեւ պատրաստ է ընդունել, որ դիմումատու ընկերության՝ 10-րդ հոդվածով սահմանված իրավունքներին միջամտող միջոցառումաբ հետապնդվել է անկարգությունները եւ հանցագործությունները կանխելու «իրավաչափ նպատակ»:

76. Ինչ վերաբերում է միջամտության անհրաժեշտությանը, Դատարանն ընդգծում է, որ մեղիա ոլորտի մասնագետների կողմից արտահայտվելու ազատության իրավունքի իրացմանը զուգորդող «պարտականություններն ու պարտավորությունները» հատուկ նշանակություն են ստանում հակամարտություն եւ լարվածություն ներառող իրավիճակներում: Այն հետեւողականորեն վճռել է, որ այն դեպքում, երբ արտահայտված կարծիքներն ատելության խոսք կամ բռնության հրահույժ են, Պայմանավորվող պետությունները չեն կարող սահմանափակել հանրության՝ դրանց մասին տեղեկացված լինելու իրավունքը՝ նույնիսկ հղում կատարելով 10-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված նպատակներին, մասնավորապես՝ տարածքային ամբողջականության կամ ազգային անվտանգության պաշտպանությանը կամ անկարգությունների կամ հանցագործությունների կանխմանը (տե՛ս *Սյուրեքն ընդդեմ Թուրքիայի (թիվ 4)* [ՄՊ] [*Sürek v. Turkey (no. 4)*] [GC]], թիվ 24762/94, § 60, 1999 թվականի հուլիսի 8 եւ *Մեհմեթ Հասան Ալթանի* գործը՝ վերելում հիշատակված, § 209):

77. Դատարանն այնուհետեւ վերահաստատում է, որ ժողովրդավարության

հիմնական բնութագրիչներից մեկը հանրային բանավեճերի միջոցով խնդիրները լուծելու առաջարկվող հնարավորությունն է: Այն բազմիցս ընդգծել է, որ ժողովրդավարությունը ծաղկում է շնորհիվ արտահայտվելու ազատության (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Թուրքիայի միացյալ կոմունիստական կուսակցությունը եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*United Communist Party of Turkey and Others v. Turkey*], 1998 թվականի հունվարի 30, § 57, *Զեկույցներ* 1998 I եւ «*Մենտրո Եվրոպա 7 Ս.Ն.Լ.*»-ն եւ *Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy* [GC]], թիվ 38433/09, § 129, ՄԻԵԴ 2012): Այս համատեքստում «ազգի կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակի» առկայությունը չպետք է պատրվակ լինի քաղաքական բանավեճերի ազատությունը սահմանափակելու համար, ինչն ընկած է ժողովրդավարական հասարակության բուն հիմքում: Դատարանի կարծիքով՝ նույնիսկ արտակարգ դրության պայմաններում Պայմանավորվող պետությունները պետք է հաշվի առնեն, որ ձեռնարկված ցանկացած միջոցառում պետք է ուղղված լինի ժողովրդավարական կարգին սպառնացող վտանգներից դրա պաշտպանությանը, եւ պետք է գործադրել ցանկացած ջանք՝ ժողովրդավարական հասարակության արժեքները պահպանելու համար, ինչպես օրինակ՝ բազմակարծությունը, հանդուրժողականությունը եւ լայն մտածելակերպը (տե՛ս *Մեհմեթ Հասան Ալթանի* գործը՝ վերելում հիշատակված, § 210 եւ *Շահին Ալփայի* գործը՝ վերելում հիշատակված, § 180):

78. Սույն գործով դիմումատու ընկերությանը թույլ չի տրվել արտակարգ դրության ընթացքում տպագրել իր լրագիրը, ընդ որում, ազգային անվտանգության ծառայողները երկու անգամ արգելել են լրագրի համարի տպագրումը՝ որեւէ կերպ չպատճառաբանելով արգելումը (տե՛ս վերելում 13-րդ եւ 15-րդ պարբերությունները): Դատարանը նշում է, որ ոչինչ չի ենթադրում, որ նյութը, որը դիմումատու ընկերությունը մտադիր էր տպագրել, պարունակում էր որեւէ աստեղության խոսք, կամ դրանով հրահրվում էր բռնություն կամ անկարգություն: Կառավարությունն այս հանգամանքը եւս չի վիճարկել: Ըստ էության, Դատարան ներկայացված բոլոր նյութերից պարզ է դառնում, որ արգելելու միակ պատճառը եղել է այն փաստը, որ դիմումատու ընկերությունը եղել է ընդդիմադիր լրագիր,

որում, ինչպես հայտնի էր, տպագրվում էին իշխանություններին քննադատող նյութեր: Դատարանը համարում է, որ այսպիսի սահմանափակումները, որոնք ունեին քաղաքական բանավեճը ճնշող եւ չհամընկնող կարծիքները լռեցնող ազդեցություն, հակասում են 10-րդ հոդվածի բուն նպատակին եւ անհրաժեշտ չեն եղել ժողովրդավարական հասարակությունում:

79. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-Ը ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

80. Դիմումատու ընկերությունը բողոքել է, որ՝ ա) խախտվել է դատարանի մատչելիության իր իրավունքը, եւ բ) Վարչական դատարանը, որը քննել է 2008 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը, չէր կարող համարվել «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Դիմումատու ընկերությունը հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա, որն այնքանով, որքանով վերաբերելի է, ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... օրենքի հիման վրա ստեղծված ... դատարանի կողմից ... արդարացի ... դատաքննության իրավունք ...»:

Ա. Ընդունելիությունը

81. Դատարանը նշում է, որ սույն բողոքները ո՛չ ակնհայտորեն անհիմն են, ո՛չ էլ անընդունելի են Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Դատարանի մատչելիությունը

ա) Կողմերի փաստարկները

82. Դիմումատու ընկերությունը նշել է, որ իրեն զրկել են այն փաստը դատարաններում վիճարկելու հնարավորությունից, որ խախտվել է տեղեկություններ հաղորդելու իր իրավունքը: Վարչական դատարանը մերժել էր նախագահի հրամանագրի դեմ ներկայացված հայցադիմումի քննությունը այն անսովոր եւ ոչ իրավաչափ հիմնավորմամբ, որ, քանի որ տվյալ հրամանագիրն

ընդունվել է Սահմանադրության հիման վրա, այդ հրամանագրի իրավաչափությունը կարող էր քննվել միայն դրա՝ Սահմանադրությանը համապատասխանության համատեքստում, հարց, որը գտնվում էր Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասության ներքո: Այնուամենայնիվ, իր հայցադիմումում դիմումատու ընկերությունը չէր վիճարկել այդ հրամանագրի սահմանադրականությունը, այլ միայն վիճարկել էր մի շարք այնպիսի օրենքներին դրա համապատասխանությունը, ինչպիսիք են «Իրավական ակտերի մասին» օրենքը եւ «Զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքը, ինչպես նաեւ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, եւ հենց Վարչական դատարանին էր վերապահված այդ հարցի քննությունը՝ անկախ այն հիմքերից, որոնց վրա հիմնված էր հրամանագիրը: Ամեն դեպքում, դիմումատու ընկերությունը փորձել է վիճարկել նախագահի հրամանագիրը նաեւ Սահմանադրական դատարանում, բայց ինչպես հաստատվել է այդ դատարանի որոշմամբ (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը), դրա համար հիմքեր չի ունեցել: Արդյունքում որեւէ ներպետական դատարան երբեւէ չի քննել նախագահի հրամանագրի դեմ ընկերության ներկայացրած հայցադիմումը տեղեկություններ հաղորդելու դրա իրավունքին միջամտելու համատեքստում:

83. Կառավարությունը նշել է, որ դիմումատու ընկերության՝ Վարչական դատարան ներկայացված հայցադիմումը չքննելու արդյունքում չի խախտվել ընկերության՝ դատարանի մատչելիության իրավունքը: Մասնավորապես, քանի որ այդ ժամանակ առկա չի եղել արտակարգ դրություն հայտարարելու իրավական ռեժիմի կարգավորման վերաբերյալ օրենսդրություն, նախագահին իրականացրել է Սահմանադրությամբ, մասնավորապես՝ 55-րդ եւ 117-րդ հոդվածներով ուղղակիորեն իրեն վերապահված՝ այդպես վարվելու լիազորությունը (տե՛ս վերելում 31-րդ եւ 33-րդ պարբերությունները): Արդյունքում դիմումատու ընկերության՝ Վարչական դատարան ներկայացված հայցադիմումը կհանգեցնէր նախագահի հրամանագրի Սահմանադրության հետ համատեղելիության քննությանը, հարց, որի քննությունը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասության շրջանակներում է: Նմանապես, իր հայցադիմումի այն մասը, որով

վիճարկվում էր հրամանագրի համատեղելիությունը որոշ օրենքների հետ, չէր կարող քննվել Վարչական դատարանի կողմից առանց ոտնահարելու Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը:

բ) Դատարանի գնահատականը

84. Դատարանը վերահաստատում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետով ապահովվում է յուրաքանչյուրի քաղաքացիական իրավունքներին եւ պարտականություններին առնչվող ցանկացած պահանջ դատարան ներկայացնելու նրա իրավունքը: Այս «դատարանի իրավունքից», որի մաս է կազմում մատչելիության իրավունքը, կարող է օգտվել ցանկացած անձ, որը վիճելի հիմքերով համարում է, որ իր քաղաքացիական իրավունքներին միջամտությունը ոչ իրավաչափ է, եւ բողոքում է, որ չի տրվել այդ պահանջով դատարան դիմելու որեւէ հնարավորություն, բավարարելով 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Ստանեն ընդդեմ Բուլղարիայի* [*Stanev v. Bulgaria*] [ՄՊ], թիվ 36760/06, § 229, ՄԻԵԴ 2012):

85. Դատարանների մատչելիության իրավունքը բացարձակ չէ, սակայն կարող է ենթակա լինել սահմանափակումների. դրանք թույլատրվում են անուղղակի ձեւով, քանի որ մատչելիության իրավունքը «իր բուն էությամբ» պահանջում է պետության կողմից կարգավորում. կարգավորում, որը կարող է տարբերվել ժամանակի եւ տարածության մեջ՝ ըստ հասարակության եւ անհատների կարիքների ու ռեսուրսների: Նման կարգավորում սահմանելով՝ Պայմանավորվող պետություններն ունենում են հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Թեեւ Կոնվենցիայի պահանջների պահպանման մասով վերջնական որոշումը Դատարանին է, տեղական իշխանությունների այն գնահատումը, թե այս ոլորտում ինչը կարող է լինել լավագույն քաղաքականությունը, ցանկացած այլ գնահատմամբ փոխարինելը Դատարանի գործառույթների մաս չի կազմում: Այնուամենայնիվ, կիրառվող սահմանափակումներով չպետք է սահմանափակեն անհատին տրամադրված՝

դատարանի մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Ավելին, որեւէ սահմանափակում համատեղելի չի լինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն չի հետապնդում օրինական նպատակ, եւ եթե գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջեւ չկա համաչափության ողջամիտ հարաբերություն (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Ջուբաքն ընդդեմ Խորվաթիայի* [*Zubac v. Croatia*] [ՄՊ], թիվ 40160/12, § 78, 2018 թվականի ապրիլի 5, հաջորդող հղումների հետ միասին):

86. Դատարանը նշում է, որ Վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ կետով նորմատիվ իրավական ակտերին, այդ թվում՝ նախագահի հրամանագրերին համապատասխանությանը վերաբերող գործերի ենթակայությունը, Սահմանադրությունից բացի ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող այլ օրենքներով, վերապահվել է Վարչական դատարանին (տե՛ս վերելում 36-րդ պարբերությունը): Դիմումատու ընկերությունը դիմել է այդ դատարան՝ վիճարկելով արտակարգ դրություն հայտարարելու եւ տեղեկություններ հաղորդելու իրավունքին միջամտելու վերաբերյալ նախագահի հրամանագրի համապատասխանությունը մի շարք ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող օրենքներին, ինչպիսիք են «Իրավական ակտերի մասին» օրենքը եւ «Զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքը, ինչպես նաեւ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը (տե՛ս վերելում 18-րդ պարբերությունը): Վարչական դատարանը մերժեց դիմումատու ընկերության հայցադիմումի քննությունը՝ նշելով, որ ինքն այդպիսի իրավագործություն չունի, քանի որ հայցադիմումի մեջ բարձրաձայնված հարցերը վերաբերում են վիճարկվող հրամանագրի սահմանադրականությանը եւ գտնվում են Սահմանադրական դատարանի բացառիկ իրավագործության ներքո (տե՛ս վերելում 19-րդ պարբերությունը): Դիմումատու ընկերության կողմից Վարչական դատարան եւ Վճռաբեկ դատարան ներկայացված բողոքներն անօգուտ էին (տե՛ս վերելում 20-23-րդ պարբերությունները):

87. Դատարանը նշում է, որ արդեն քննել է նմանատիպ իրավիճակ Հայաստանի դեմ հարուցված մի շարք գործերով՝ գտնելով, որ խախտվել է դատարանի մատչելիության իրավունքը (տե՛ս Մեկիքյանն ընդդեմ Հայաստանի

[*Melikyan v. Armenia*], թիվ 9737/06, §§ 46-49, 2013 թվականի փետրվարի 19 եւ Սադաթեյանն ընդդեմ Հայաստանի [*Saghatelyan v. Armenia*], թիվ 7984/06, §§ 46-51, 2015 թվականի հոկտեմբերի 20): Ինչպես նշվել է այդ վճիռներում Սահմանադրական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 16-ի որոշման առնչությամբ, Հայաստանում գոյություն ունի դատական պրակտիկա, որին համապատասխան դատարանները պարբերաբար մերժում են քննության առնել որոշ պետական մարմինների եւ պաշտոնյաների կողմից ընդունված ակտերի, այդ թվում՝ Հայաստանի նախագահի հրամանագրերի դեմ բողոքները՝ անկախ այն հանգամանքից՝ դիմումատուները վիճարկել են այդ ակտերի օրինականությունը թե սահմանադրականությունը (տե՛ս վերելում հիշատակված՝ Մելիքյանի գործը, § 47 եւ վերելում հիշատակված՝ Սադաթեյանի գործը, § 49):

88. Թվում է, թե սույն գործի դեպքում ստեղծվել է նմանատիպ իրավիճակ: Դիմումատու ընկերությունն առերեւոյթ վիճարկել է նախագահի հրամանագրի օրինականությունը՝ նշելով, ի թիվս այլնի, այն օրենքները, որոնց իր կարծիքով չի համապատասխանում հրամանագիրը, սակայն Վարչական դատարանն անտեսել է դիմումատու ընկերության կոնկրետ փաստարկները՝ ելնելով այն ենթադրությունից, որ նրա կողմից ներկայացված հայցադիմումը ոչ թե վարչական, այլ սահմանադրական բողոք է: Արդյունքում դիմումատու ընկերությունը զրկվել է նախագահի հրամանագիրը եւ 10-րդ հոդվածով սահմանված իր իրավունքերին միջամտելու փաստը որեւէ ներպետական դատական մարմնում վիճարկելու հնարավորությունից, քանի որ, ինչպես հենց Սահմանադրական դատարանն է հաստատում (տե՛ս վերելում 27-րդ պարբերությունը), դիմումատու ընկերությունը նախագահի տվյալ հրամանագրի վիճարկման համար սահմանադրական բողոք ներկայացնելու հիմք չի ունեցել (համեմատել վերելում հիշատակված՝ Սադաթեյանի գործը, § 48):

89. Վերը նշվածի հիման վրա Դատարանը եզրակացնում է, որ արտակարգ դրություն հայտարարելու վերաբերյալ նախագահի հրամանագրի դեմ ներկայացված՝ դիմումատու ընկերության հայցադիմումի քննությունը Վարչական դատարանի կողմից ներկայացված հիմքերով մերժելը խախտել է դիմումատու

ընկերության դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը:

90. Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

2. Օրենքի հիման վրա ստեղծված դատարանը

91. Դիմումատու ընկերությունը նշել է, որ 2008 թվականի ապրիլի 17-ի իր հայցադիմումի քննությունը մերժելու վերաբերյալ որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը քննության առած Վարչական դատարանը (տե՛ս վերելում 21 պարբերությունը) գործի լսման ժամանակ ավելի շատ դատավորներ է ունեցել իր կազմում, քան նախատեսված է օրենքով, մասնավորապես՝ Վարչական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով եւ 125-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով (տե՛ս վերելում 37-րդ եւ 38-րդ պարբերությունները): Հետևաբար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով դա չի կարող համարվել «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

92. Կառավարությունը վիճարկել է այդ փաստարկը:

93. Հաշվի առնելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի մասով դիմումատու ընկերության՝ Վարչական դատարանի մատչելիության իրավունքը մերժելու վերաբերյալ իր եզրահանգումները (տե՛ս վերելում 86-90-րդ պարբերությունը)՝ Դատարանը համարում է, որ անհրաժեշտ չէ քննել, թե արդյոք տվյալ դեպքում, այս հոդվածը խախտվել է նաեւ դատարանի կազմի մասով:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

94. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

95. Դիմումատու ընկերությունը պահանջել է 18 000 եվրո որպես նյութական վնասի հատուցում եկամտի այն կորստի դիմաց, որը կրել է արտակարգ դրության ժամանակ թերթը չտպագրելու արդյունքում: Այդ ժամանակահատվածում պետք է տպագրվեր տասներեք խմբաքանակ: 2008 թվականի փետրվարի միջին օրական տպաքանակը կազմել է 9 500 օրինակ, յուրաքանչյուր օրինակի համար դիմումատու ընկերության համախառն եկամուտը կազմել է 70 ՀՀ դրամ: Վերջնական գումարը 2008 թվականի մարտի 20-ի փոխարժեքով (480 ՀՀ դրամ 1 եվրոյի դիմաց) եվրոյի փոխարկելիս ստացվում է 18 000 եվրո ($13 \times 9\,500 \times 70 = 8\,645\,000$ ՀՀ դրամ): Դիմումատու ընկերությունը նաեւ պահանջել է 20 000 եվրո որպես ոչ նյութական վնասի հատուցում, որը ներառում է բարոյական վնասը, որը պատճառվել էր իր անձնակազմին մասնագիտական գործունեության գործող արգելքի պատճառով:

96. Կառավարությունը նշել է, որ դիմումատու ընկերությունն ապացույցներով չի հիմնավորել նյութական վնասի մասով իր պահանջը, այդ թվում՝ միջին օրական տպաքանակի գումարի եւ յուրաքանչյուր օրինակից ստացված գումարի վերաբերյալ իր պահանջները: Հետեւաբար պահանջը հիմնավորված չէ: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասի մասով պահանջին, Կառավարությունը նշել է, որ վնասի հատուցում կարող էր պահանջել միայն

դիմումատու ընկերությունը, այլ ոչ դրա անձնակազմը, քանի որ անձնակազմի անդամների իրավունքներին որեւէ միջամտություն չի եղել, որոնք հետեւաբար տուժողներ չեն եղել: Ամեն դեպքում, խախտում արձանագրելն ինքնին բավարար արդարացի փոխհատուցում կլինի:

97. Դատարանը նկատում է, որ նյութական վնասի մասով դիմումատու ընկերության պահանջը հիմնավորված չէ որեւէ փաստաթղթով կամ այլ տեսակի ապացույցներով. հետեւաբար այն մերժում է այս պահանջը: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասի մասով պահանջին, Դատարանը վերահաստատում է, որ եթե Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները պետք է իրականացվեն, անհրաժեշտ է, որ այն ունենա նաեւ առեստրային ընկերություններին ոչ նյութական վնասի համար նյութական փոխհատուցում տրամադրելու լիազորություն: Այդ դեպքերում պետք է հաշվի առնել ընկերության հեղինակությունը, որոշումների ընդունման գործընթացը ծրագրելու հարցում որոշակիության բացակայությունը, ընկերության կառավարման գործընթացի տապալումը (որի հետեւանքները հաշվարկելու ստույգ մեթոդ չկա) եւ վերջապես ղեկավար անձնակազմի անդամներին պատճառված անհանգստությունն ու անհարմարությունը (տե՛ս Մելտեքս ՍՊԸ-ն եւ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի [*Meltex Ltd and Movsesyan v. Armenia*], թիվ 32283/04, § 105, 2008 թվականի հունիսի 17): Դատարանը համարում է, որ սույն գործով հայտնաբերված խախտումները փոխհատուցում տրամադրելու անհրաժեշտություն են ենթադրում եւ առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ ոչ նյութական վնասի դիմաց դիմումատու ընկերությանը շնորհում է 9 000 եվրո՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

98. Դիմումատու ընկերությունը նաեւ պահանջել է 10 000 եվրո որպես դատական ծախսերի փոխհատուցում՝ բացատրելով, որ իր փաստաբանը ծառայությունները մատուցել է անհատույց հիմունքներով, բայց Դատարանին խնդրելով, որ այդ գումարը տրամադրի որպես պարգևավճար:

99. Կառավարությունը նշել է, որ հաշվի առնելով, որ դիմումատու ընկերությունն ընդունել է, որ ոչ մի գումար չի վճարել իր ներկայացուցչի աշխատանքի դիմաց, կասկած չկա, որ դիմումատու ընկերությունն իրականում դատական ծախսեր չի կրել, եւ որ ծախսերի եւ ծախքերի մասով նրա պահանջն արդարացված չէ:

100. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմումատու ընկերությունը որեւէ գումար չի վճարել իր ներկայացուցչին, որն աշխատել է անհատույց հիմունքներով, ինչպես նաեւ առկա չէ որեւէ ապացույց, որ դիմումատու ընկերությունը պարտավոր է որեւէ գումար վճարել իր փաստաբանին: Նման հանգամանքներում այս ծախսերը չեն կարող պահանջվել, քանի որ դրանք իրականում չեն կատարվել, եւ այս պահանջը պետք է մերժվի (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *ՄըքՔաննը եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության [McCann and Others v. the United Kingdom]*, 1995 թվականի սեպտեմբերի 27, § 221, շարք Ա, թիվ 324):

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

101. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ վարկավորման սահմանային տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱԴԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Հայտարարում է* հայցադիմումն ընդունելի.
2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում.
3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դատարանի մատչելիությունից զրկելու մասով.
4. *Վճռում է*, որ բողոքի հիման վրա անհրաժեշտ չէ քննել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված բողոքը Վարչական դատարանի կազմի մասով.
5. *Վճռում է, որ՝*
 - ա) պատասխանող պետությունը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռը վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատու ընկերությանը ոչ նյութական վնասի դիմաց վճարի 9 000 եվրո (ինը հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման ամսաթվին գործող փոխարժեքով.
 - բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ վարկավորման սահմանային տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.
6. *Մեթոմ է* դիմումատու ընկերության՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2021 թվականի մարտի 21-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Իլգե Ֆրայվիրտ

Յոնկո Գրոզե

Քարտուղարի տեղակալ

Նախագահ

